ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԳԾՈՎ

Թվապատում հետաքննություն.
մեդիան ընդդեմ կոռուպցիայի

ՀՏԴ 070 : 316
ԳՄԴ 76.0 + 60.56
Բ 380

Բացահայտումների հետագծով: «Թվապատում հետաքննություն. մեդիան ընդդեմ կոռուպցիայի»: Հոդվածների ժողովածու.— Եր.: «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2017.— 96 էջ:

«Բացահայտումների հետագծով» լրագրողական ձեռնարկը պատրաստել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ: Ձեռնարկը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ իրականացվող «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակներում: Ձեռնարկի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի Լիտվայի դեսպանության, ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՀՏԴ 070 : 316

ԳՄԴ 76.0 + 60.56

Թարգմանիչներ՝
Սյուզան Մարուքյան
Ամալյա Բաբայան
Ալին Օզինյան
Մեսրոպ Հարությունյան

Լուսանկարները՝
Հակոբ Հովհաննիսյանի
Սոնա Քոչարյանի

Խմբագրական կազմ՝
Մեսրոպ Հարությունյան
Նարինե Սաֆարյան
Մանե Գրիգորյան
Նունե Սարգսյան

Ձևավորումը՝
«Զանգակ» հրատարակչության

ISBN 978-9939-1-0495-9

© «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2017

ՆԱԽԱԲԱՆ 5

ԴԵՅՎԻԴ ԼԻ. «Համագործակցություն ընդդեմ կոռուպցիայի» 7

ԴԵՅՎԻԴ ԲԼՈՍ. «Ավելի մեծ լսարան մեր պատմությունների համար» 13

ՕԼԵԳ ԽՈՄԵՆՈԿ. «Բաց տվյալները՝ հետաքննող լրագրողների աշխատանքում» 21

ԼՈՒԻՍ ԼԻՖ. «Քաղաքացիական մասնակցության մոդելները տեղեկատվական նոր միջավայրում» 33

ՌԻՏԱՍ ՍՏԱՍԵԼԻՍ. «Հետաքննական լրագրություն. ինչպես անհնարինը դարձնել հնարավոր» 41

ՔԵՄԱԼ ԳՅՈՔԹԱՇ. «Հետաքննական լրագրությունը ճնշման տակ. Թուրքիայի օրինակը» 47

ՍԿԻՐՄԱՆՏԱՍ ՄԱԼԻՆԱՈՒՍԿԱՍ. «Ինչպես ստեղծվեց 15min.lt բրենդը» 53

ԿՈՐՆԵԼԻԱ ԿՈԶՈՆԱԿ. «Ինչպես են պետական գումարները հասնում քաղաքական կուսակցությունների ընտրարշավներին» 59

ՆԱՆԱ ԲԻԳԱՆԻՇՎԻԼԻ. «Լուրջ հետաքննությունը կարող է սկսվել փոքր դետալից» 67

ՊԱՎԼԱ ՀՈԼՑՈՎԱ. «Հանցախումբ, քաղաքական գործիչներ, կոնյակ» 75

ՎԻԿՏՈՐ ՅՈՒԿԵՉԵՎ. «Հասարակական հետաքննությունները «Так-так-так» ցանցում» 81

ԷՎԱԼԴԱՍ ԼԱԲԱՆԱՈՒՍԿԱՍ. «Ինչ պետք է ակնկալել, երբ հետաքննությունը հրապարակվում է» 89

ՆԱԽԱԲԱՆ

2016 թ.-ի դեկտեմբերի 6-8-ը Երևանում Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (նախկին Ինտերնյուս մամուլի աջակցության ՀԿ) անցկացրեց «Թվապատում հետաքննություն. մեդիան ընդդեմ կոռուպցիայի» եռօրյա լրագրողական կոնֆերանսը: Աշխարհի 10 երկրից ժամանած հետաքննական լրագրության ոլորտի հայտնի մասնագետներ ներկայացրին իրենց փորձը:

Կոնֆերանսի հիմնական նպատակն էր նպաստել Հայաստանում հետաքննական լրագրության զարգացմանը, բանախոսությունների, ցուցադրությունների, գործնական դասերի միջոցով ներկայացնել կոռուպցիային ու մարդու իրավունքներին առնչվող թեմաների լուսաբանման՝ տարբեր երկրների և մասնագետների փորձը:

«Բացահայտումների հետագծով» ձեռնարկը մեկ տեղ է հավաքել «Թվապատում հետաքննություն» կոնֆերանսին բանախոսների ներկայացրած բազմազան թեմաները՝ լրագրողական ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելու համար:

Ձեռնարկում տեղ գտած 12 հոդվածների հեղինակները տարբեր երկրներից են՝ Լիտվա, Չեխիա, Ուկրաինա, Մոլդովա, Թուրքիա, Վրաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա:

Նրանք գրում են թե՛ իրենց մասնագիտական փորձի, լրագրողական բացահայտումների, թե՛ իրենց երկրում առկա իրավիճակի, միջսահմանային համագործակցության կարևորության ու ազդեցության մասին:

Հեղինակները ներկայացնում են հետաքննական լրագրության ժամանակակից միտումները, հարթակներն ու գործիքները, խոսում հնարավորությունների ու խոչընդոտների, արգելքների ու ճնշումների մասին:

«Բացահայտումների հետագծով» ձեռնարկը համալրում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի մասնագիտական գրադարանը և նախատեսված է լրագրողների, մեդիա փորձագետների, լրագրության ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի համար:

ԴԵՅՎԻԴ ԼԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ

Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի (ICIJ) հիմնադիր անդամ է: Եղել է The Guardian թերթի հետաքննությունների բաժնի խմբագիրը, որտեղ այժմ խորհրդատու է: Ներգրավված է եղել մի շարք կարևոր լրագրողական հետաքննություններում: Լրագրություն է դասավանդում Լոնդոնի City համալսարանի ժուռնալիստիկայի դպրոցում: Բազմաթիվ գրքերի հեղինակ է: Բազմիցս արժանացել է բրիտանական և միջազգային լրագրողական մրցանակների:

Այն լրագրողներին, որոնք փորձում են բացահայտել ու մերկացնել կոռուպցիան, միշտ էլ դժվարին ու ծանր պայքար է սպասում: Նրանք հետապնդում են փող և իշխանություն ունեցող մարդկանց, որոնք իրենց կեղտոտ հաշիվներն ապահով կերպով թաքցնելու համար ի զորու են վճարել հաճոյակատար իրավաբանների, հաշվապահների և բանկիրների խմբերի:

Այսուհանդերձ, վերջին տարիների երկու զարգացումներ հետաքննող լրագրողներին զինել են նոր գործիքներով: Նորարարություններից մեկը անդրսահմանային համագործակցությունն է: Մյուսը՝ տվյալների զանգվածային արտահոսքը, որը հնարավոր դարձավ համակարգչային ցանցահենների (hacker) շնորհիվ: Այս երկու առցանց երևույթները միասին մի նոր հզոր զենք դարձան, որի միջոցով վճռական տրամադրված լրագրողները սովորեցին հաջողությամբ պայքարել ֆինանսական կոռուպցիայի դեմ:

Մշտական անդրսահմանային համագործակցությունը սկսվեց 1998-ին: Ես փորձառու հետաքննող լրագրողների այն հիսուն հոգանոց խմբի մեջ էի, որոնց հրավիրել էին Հարվարդի համալսարանի նիստերի դահլիճ: Մենք այնտեղ էինք՝ լսելու Չարլզ Լյուիսին (որը CBS-ի “60 Minutes” վավերագրական ֆիլմերի շարքի ամերիկյան պրոդյուսերն էր), ինչպես նաև՝ ուրվագծելու մի նախագիծ, որը հետագայում վերածվեց «Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիում» (ICIJ):

Ծրագրի նպատակն էր՝ միասին աշխատել խոշոր պատմությունների վրա և տարբեր ԶԼՄ-ների գործընկերների հետ այդ պատմությունները աշխարհով մեկ տարածել միաժամանակ: Վաշինգտոնում ստեղծված կենտրոնը, որը ֆինանսավորվում էր նվիրատուների կողմից, պետք է համաձայնեցներ և տեղեկատվությունը տարածեր համացանցի միջոցով: Մենք ուզում էինք հաղթել անդրազգային ընկերություններին իրենց իսկ զենքով և խաղի կանոններով:

Առաջին հաջողությունը գրանցեցինք այն ժամանակ, երբ Հարավային Ամերիկայի, Ասիայի և Արևելյան Եվրոպայի լրագրողների հետ միասին մանրամասն ուսումնասիրեցինք ընկերությունների ներքին շրջանառության հազարավոր թղթապանակ-գործեր (իսկ այն ժամանակ դրանք թղթի վրա էին), որոնք հրապարակեցինք Լոնդոնում բրիտանական «Ամերիկան Տոբակո» (BAT) ընկերության դեմ հարուցած դատավարությունից հետո: Օգտագործելով այդ տեղեկությունները՝ մենք ի վիճակի եղանք վերծանել ահավոր ճշմարտությունը. ընկերությունը աչք էր

փակում մաքսանենգների զանգվածային գործողությունների վրա՝ զարգացող երկրները լցնելով էժան և կախվածություն առաջացնող ծխախոտներով:

Մեր ջանքերով կարևոր հետաքննական աղյուսիկները ընդհանուր պատկերի մեջ իրենց ճիշտ տեղն ընկան: Մենք ցույց տվեցինք, որ հնարավոր է աշխարհի մասշտաբով ապահովել տեղեկությունների միաժամանակյա հրապարակում: Լրագրողները հասկացան, որ կարիք չկա գործընկերներին դիտարկել որպես մրցակիցներ, եթե նրանք հրատարակվում են մեկ ուրիշ լեզվով և մեկ ուրիշ երկրում: Փոխարենը՝ նրանք կարող են օգնել միմյանց: Բոլորը կշահեն փոխադարձ շփումներից և ուշադրությունից: Այդ գործընթացն ապահովեց հզոր իրավական պաշտպանություն, ինչը նվազ կարևոր չէ բռնապետական ռեժիմ ունեցող փոքր երկրների լրագրողների համար: Նրանց աշխատանքն այլևս հնարավոր չէր կասեցնել, քանի որ արդյունքը հրապարակվում էր նաև Վաշինգտոնում և Լոնդոնում:

Այդ ժամանակ գործընկեր ԶԼՄ-ներից մեկում՝ Լոնդոնի The Guardian-ում ես գրեցի. «ԲԱՏ-ի պատմությունը հետաքրքիր կերպով միավորել է հետաքննական հմտությունները և գլոբալ տեխնոլոգիաները: Ու նաև մեկ այլ, ավելի քիչ շոշափելի բան է սկիզբ առել. դա ճշմարտությանը հասնելու նոր հնարավորությունների վերաբերյալ աշխարհով մեկ տարածվող լավատեսությունն է»:

Հաջորդ տարիներին մեզ հաջողվեց կառուցել անդրսահմանային համատեղ մոդել The Guardian-ում՝ օգտագործելով այս անգին ICIJ կապերը: Մի քանի տարի տևած հետաքննությունից հետո մենք կարողացանք բացահայտել կաշառակերության՝ ամբողջ աշխարհում տարածված մի ցանց, որն օգտագործվում էր Միացյալ Թագավորության զենքեր արտադրող հսկա BAE-ի թողարկած ռազմական ինքնաթիռները վաճառելու համար: Մենք այս տեղեկությունը կիսեցինք Ֆրեդերիկ Լորենի և շվեդական հեռուստալրագրողների թիմի, Ռումինիայում հետաքննող լրագրող Փոլ Ռադուի և Թանզանիայից լրագրողների հետ, որոնք մեզ պատմեցին այն, ինչ իրենք գիտեն (բայց չէին կարող տպագրել իրենց երկրում) գործում ներգրավված անազնիվ միջնորդների մասին:

Համագործակցությունը թեև մեծ չէր, բայց կայացավ: Լրագրողների իտալական թիմի հետ աշխատելով՝ մենք կարողացանք բացահայտել, որ «իտալական» լոլիկները, որոնք վաճառվում են բրիտանական խանութներում, իրականում ներկրված էին Չինաստանից: Լոլիկները դրվում էին իտալական պահածոյատուփերի մեջ, որպեսզի հնարա-

վոր լինի դրանք մակնշել «Արտադրված է Իտալիայում» պիտակով: Այսուհանդերձ, նախքան խաղի կանոնները փոխելու հզորություն ձեռք բերելը, մեզ անհրաժեշտ էին այլ տեսակի գործընկերներ: Ովքե՞ր էին նրանք: Ցանցահենները: Աշխարհի ռազմական, տնտեսական, բժշկական, գիտական, առևտրային, քաղաքական, տեխնիկական և ֆինանսական տեղեկությունները յուրաքանչյուր օր հաստատուն և կանոնավոր կերպով կուտակվում են տվյալների հսկայական բազաներում: Նախկինում երբեք տեղեկատվության այսպիսի բուրգեր գոյություն չեն ունեցել: Եվ երբ այդ տեղեկությունները սկսեցին արտահոսել, նույն անհայտ «վարպետները», որոնք գիտեին նաև կառավարել այդ համակարգերը, կարողացան նաև կոտրել դրանք:

Ցանցահենության ներուժի առաջին մեծ դրսևորումը ԲԱՏ-ի սկզբնական բացահայտումներից հետո էր՝ 2010 թվականին: Սա այն պահն էր, երբ Վիքիլիքսը ամպրոպի պես պայթեց աշխարհի գլխին: Խռոված ամերիկյան երիտասարդ շարքային զինվոր Մանինգը պարզեց, որ Իրաքի անապատում ծվարած, աշխարհին անհայտ ճամբարից ինքը կարող է ցանցահենությամբ մտնել ԱՄՆ-ի բանակի հույժ գաղտնի ռազմական զեկույցների բազա, որն ամբողջովին վերաբերում էր երկու պատերազմներին՝ Իրաքում և Աֆղանստանում:

Նրան հաջողվեց բեռնել մի ցնցող տեսանյութ, թե ինչպես է ԱՄՆ-ի ուղղաթիռը Բաղդադում սխալմամբ գնդացրային կրակահերթով սպանում խաղաղ քաղաքացիների: Նա նաև հաջողացրեց «թռցնել» հազարավոր չխմբագրված դիվանագիտական հաղորդագրություններ ԱՄՆ-ի՝ աշխարհով մեկ սփռված դեսպանատներից:

Մանինգը և մի քանի այլ ցանցահեն ակտիվիստներ տվեցին զանգվածային թվային արտահոսքի դարաշրջանի մեկնարկը: Այն ուներ բազմաթիվ տեխնիկական, էթիկական և գործառնական խնդիրներ: Ոչ ոք չէր կարող կարդալ կամ գոնե աչքի անցկացնել այս նյութերը, անհրաժեշտ էր դրանք դարձնել որոնելի: Ի՞նչ ծրագրեր կարող էին լրագրողներն օգտագործել տեղեկությունների այս ահռելի որսը որոնելի դարձնելու համար:

Մենք կարծում էինք, թե Մանինգի տեղեկությունների բազան ահռելի էր՝ 1.65 գեգաբայթ կոշտ չափագրված գրառումներով, որոնք հնարավոր էր ինդեքսավորել և դարձնել համեմատաբար ավելի ուղղագիծ տվյալների բազա: Սակայն շուտով պարզվեց, որ դրան հաջորդող արտահոսքերը կազմված են ամենատարբեր խառն ու խճճված ֆորմատավորմամբ նյութերից. հին էլեկտրոնային նամակներ, անձնագրերի

պատճեններ, աղյուսակներ և տվյալներ, որոնք հասնում են հարյուրավոր գեգաբայթերի, իսկ հետո նաև՝ տեռաբայթերի:

Ընդունելի՞ էր, արդյոք, նյութը հանրայնացնելը այն դեպքում, երբ այն կարող էր պարունակել զգայուն տեղեկություններ, որոնք հնարավոր է ճանաչելի դարձնեին իրազեկիչներին կամ բացահայտեին այնպիսի մարդկանց մասնավոր հասցեներ, որոնք կարող էին տուժել դրանից:

Եվ կարո՞ղ էին, արդյոք, ցանցահենները, ինչպիսին, օրինակ, Վիքիլիքսի Ջուլիան Ասանժն է, ում Մանինգը փոխանցել էր նյութերը, արդյունավետորեն աշխատել այսպես կոչված՝ «հիմնական մեդիայի» հետ: Նրանց քաղաքական ծրագրերը շուտով խափանվեցին:

Այնուհանդերձ, ի վերջո բախտ վիճակվեց տեսնել Ասանժին և նրա համագործակցությունը աշխարհի ամենաhեղինակավոր խմբագիրների խմբի հետ՝ The New York Times-ից, Լոնդոնի The Guardian-ից, Իսպանիայի El Pais-ից, Ֆրանսիայի Le Monde-ից և Գերմանիայի Der Spiegel-ից: Համագործակցության գաղափարը տարածում էր գտնում:

Այս դրամայի հաջորդ փուլն իր շրջապտույտի մեջ առավ ամերիկյան NSA-ի պայմանագրային աշխատող Էդվարդ Սնոուդենին: Աշխարհին ականատես եղավ ԱՄՆ-ի հետախուզական գործակալությունների տեսահետևման համակարգերում նրա ապշեցուցիչ ցանցահենությանը:

Շուտով Վաշինգտոնում արտառոց արտահոսքի նոր զանգվածային հեղեղ թափվեց ICIJ-ից, որի տնօրենն ավստրալիացի Գերարդ Ռայլն էր՝ մի հաստատակամ նախկին թերթի խմբագիր: 2011 թվականին Կիևում Համաշխարհային լրագրողական համաժողովի ժամանակ, Ռայլը համախմբեց մի թիմ, որը պետք է աշխատեր բացահայտումների շարանի առաջին գործերի հետ: Դա պետք է ցնցեր օֆշորային համակարգը, որն աշխարհի կեղտոտ փողերի որջն է: Կոռուպցիայի դեմ պայքարելու համար կիրառվող լրագրողական այս նոր հնարքների ամբողջական ներուժը վերջապես սկսեց կյանքի կոչվել: Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) մասնագետները, ովքեր մուտք ունեին դեպի օֆշորային ընկերություններ հիմնադրող գործակալների տվյալների բազաներ, իրավաբաններ Պանամայից և մի շարք շվեյցարական բանկեր շուկա գտան՝ ի դեմս եվրոպական և ամերիկյան հարկային իշխանությունների, ովքեր պատրաստ էին կանխիկ դրամով վճարել գողացված տեղեկությունների համար:

Այս նյութերը մշակելու համար Ռայլի համաշխարհային ցանցը լավագույն կերպով էր տեղակայված: Նրանք պարզում էին տարբեր անձանց ինքնությունն ու դերը կասկածելի գործարքներում՝ Մոնղոլիայից սկսած մինչև Մոլդովա ու Պարագվայ:

Առաջինը գործարկվեց օֆշորային արտահոսքի նախագիծը, որը կողոպտեց երկու մեծ օֆշորային ընկերությունների թղթապանակները բրիտանական Վիրջինյան կղզիներում: Հետո հայտնվեցին PWC միջազգային հաշվապահական ընկերության նյութերը, որոնք բացահայտում էին հարկերից խուսափելու սխեմաները Լյուքսեմբուրգում: Դրանց հաջորդեց Swiss Leaks-ը՝ HSBC-ի մաս կազմող շվեյցարական հիմնական բանկերից մեկի նամակագրությունը՝ բացահայտելով, թե ինչ ճանապարհներով էին նրանք օգնում հարուստներին թաքցնել իրենց միլիոնները:

Այս գործընթացն իր գագաթնակետին հասավ այսպես կոչված Պանամայի փաստաթղթերով, որի ժամանակ պարզվեց, որ Mossack Fonseca միջազգային իրավաբանական ընկերությունը աշխարհով մեկ քաղաքական գործիչներին և հանցագործներին (սկսած Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի գործընկերներից մինչև տասնյակ անհատներ, ովքեր ամենատարբեր երկրներում գտնվում էին քրեական հետապնդման մեջ) տրամադրում էր գաղտնի ծառայություններ:

Սա հեղեղի պես սրընթաց գործընթաց է: Ավելի շատ գաղտնի փաստաթղթեր են լույս աշխարհ գալիս ընկերությունների ռեեստրից Բահամներում, իսկ Ռայլի մրցակից եվրոպական կոնսորցիումը, որի մեջ մտնում են Der Spiegel-ը և Լոնդոնի Sunday Times-ը, խոշոր հարկերից խուսափելու տվյալներ է բացահայտում, որը կապված է իսպանացի ֆուտբոլիստների հետ:

Հնարավոր է, որ արտահոսքի այս ցունամին ի վերջո հանգչի, որովհետև տվյալների էլեկտրոնային բազաների տերերը շատ ավելի մեծ հաջողություններ են գրանցում դրանք թաքուն պահելու գործում: Բայց քանի դեռ այս ձեռնարկին խառնված է մարդ էակը, կարելի է ասել, որ ոչինչ մինչև վերջ ապահով չէ: Եթե ստեղծվում է որևէ տվյալների բազա, ապա այն կարող է նաև արտահոսք ունենալ: Ինչ վերաբերում է ներկային, ապա միջազգային կոռուպցիայի մեխանիզմը ակնառու է այն լրագրողների համար, ովքեր պատրաստ են գործի անցնել:

ԴԵՅՎԻԴ ԲԼՈՍ

ԱՎԵԼԻ ՄԵԾ ԼՍԱՐԱՆ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Կազմակերպված հանցագործության և կոռուպցիայի լուսաբանման ծրագրի» (OCCRP) կովկասյան տարածաշրջանային խմբագիրն է: Ամերիկյան լրատվամիջոցներում 25 տարվա գործունեությունից հետո որպես լրագրող, խմբագիր աշխատել ու դասավանդել է Կամբոջայում, Բոսնիայում, Ինդոնեզիայում, Արևելյան Թիմորում, Հնդկաստանում, Աֆղանստանում, Լիբիայում: 2004-2006-ին ղեկավարել է Լրագրության և մեդիա մենեջմենթի կովկասյան դպրոցը (CSJMM) Թբիլիսիում: Համագործակցել է Լրագրողների միջազգային կենտրոնի (ICFJ), Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի (IWPR) հետ:

Հետաքննական պատմություններ գրելիս բոլորս էլ մեծ ջանքեր ենք գործադրում և հարյուրավոր ժամեր ծախսում հետազոտելու, դրա արդյունքներն ամփոփելու, գրելու, խմբագրելու, փաստերը նորից ստուգելու և պատմությունը ձևակերպելու համար:

Սակայն մենք պետք է նաև հարյուրավոր ժամեր ծախսենք և հնարավոր ամեն ինչ անենք, որպեսզի մեր պատմությունները դիտեն, ընթերցեն կամ ունկնդրեն առավելագույն թվով մարդիկ:

Կարծում եմ՝ ինտերնետը ծուլացրել է մեզ: Լրագրերն ավելի շատ գումար և ջանքեր են ծախսում տպագրման և տարածման, քան լրաքաղի համար: Ի՞նչ օգուտ այն լրագրից, որը երբեք չի հասնում իր ընթերցողին: Հեռուստակայաններն ավելի շատ գումար և ջանքեր են ծախսում արտադրության և տարածման, քան լրաքաղի համար: Ի՞նչ օգուտ հեռուստահաղորդումից, եթե հեռուստադիտողը չի կարող գտնել այն հեռակառավարման վահանակի մեկ սեղմումով:

Սակայն երբ մեր աշխատանքը գրեթե ամբողջովին վերբեռնվում է համացանց, մեզ թվում է, որ նյութերի տարածումը զուտ մեր ինտերնետային կայքում (հաճախ վատ մարքեթինգով) տեղադրելն է, այնուհետև՝ համապատասխան հղումը Ֆեյսբուքով տարածելը: Հոգ չէ, որ մրցակցությունն այժմ միլիոնավոր ինտերնետային կայքերի միջև է՝ ի տարբերություն մեր շուկաներում առկա սակավաթիվ լրագրերի և հեռուստակայանների:

Աշխարհում և ոչ մի լրատվամիջոց ինքն իրենով հասանելի չի դառնում բավարար թվով մարդկանց համար: Ահա թե ինչու Facebook-ով նյութեր տարածելը նման արագ զարգացում ստացավ: Սակայն անհրաժեշտ է մտածել մեր տեղեկատվության ներկայացման հնարավոր բոլոր ուղիների մասին, որպեսզի կարողանանք այն առաջարկել տարբեր լրատվամիջոցների:

Ցանկացած մեդիա շուկա և մեր հետաքննական բաժիններից յուրաքանչյուրը տարբեր են: Աշխատանքի ձևերն էլ շատ են: Մենք պարզապես ցանկանում ենք ներկայացնել այն գաղափարները, որոնք վերջին չորս տարվա ընթացքում փորձում ենք կյանքի կոչել Վրաստանում:

Աշխատանքային պայմանները գործարաններում

«Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի» (OCCRP) թղթակից Նինո Բաքրաձեն 2014 թվականին ծպտված աշխատեց Քութայիսիի երկու տեքստիլ գործարաններում՝ աշխա-

տանքային պայմանները ներկայացնելու նպատակով: Նա պատրաստեց անգլերեն մուլտիմեդիա պատմություն OCCRP-ի համար: Քանի որ մեր պատմություններից շատերն են անդրադառնում Վրաստանի խնդիրներին, մեր նյութերը միաժամանակ անվճար հրապարակում ենք նաև www.netgazeti.ge -ում, որը հանրաճանաչ և մեծ հարգանք վայելող լրատվական կայք է: Մենք նրանց հետ միասին նստում և աշխատում ենք այդ նյութերի խմբագրման կամ ձևաչափի փոփոխությունների վրա: (Արդյունքը տե՛ս՝ http://bit.ly/2jmdEi1):

Վրաստանում իրականացված բոլոր հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդկանց մեծամասնության համար նորությունների և տեղեկատվության աղբյուրը դեռևս հեռուստատեսությունն է: Ամենաբարձր վարկանիշ ունեցող լրատվական հաղորդումը PS-ն է, որը տարիներ շարունակ հեռարձակվում է կիրակի օրերին, երեկոյան ժամը 9-ին Rustavi 2 հեռուստաընկերության եթերով:

Ուստի ցանկացած ժամանակ մենք պատրաստ ենք վերափոխել մեր պատմություններից որևէ մեկն այնպես, որպեսզի PS-ը կարողանա օգտագործել այն: Այս պատմության դեպքում Rustavi 2-ը նախընտրեց օգտագործել Բաքրաձեի գաղտնի նկարահանած տեսանյութերից մի քանի վայրկյան տևողությամբ հատվածներ, մանրամասն հարցազրույց անցկացնել նրա հետ, ապա մեկնաբանություններ ստանալ գործարանի պաշտոնյաներից: Արդյունքում ստացվեց մի պատմություն, որը լայնորեն դիտվեց ողջ երկրում:

Պանամայի փաստաթղթերը

Կովկասում OCCRP-ին և դրա հայկական գործընկեր Հետք-ին Պանամայի փաստաթղթերի տվյալների շտեմարանը հասանելի դարձավ 2015 թվականի սեպտեմբերին: Դրանից կարճ ժամանակ անց մեզ տեղեկացրեցին, որ պատմությունները, որոնց շուրջ բանակցել էին ողջ աշխարհից տասնյակ լրատվամիջոցներ, հրապարակվելու են 2016 թ.-ի ապրիլի 3-ին, տեղական ժամանակով երեկոյան ժամը 10-ին:

Ստացվում էր կիրակի գիշերը՝ Rustavi 2-ի PS-ի հեռարձակման ճիշտ մեջտեղում:

Պանամայի փաստաթղթերի բովանդակությունը գաղտնի պահելու խոստմանը հավատարիմ՝ մենք սպասեցինք այնքան, մինչև դրանց հրապարակման ամսաթվին մնաց երեք շաբաթ, որից հետո հանդիպեցինք Rustavi 2-ին և առաջարկեցինք հետևյալը՝ երեկոյան ուղիղ ժամը 10-ին Rustavi 2-ը կարող էր հայտարարել, որ հանդիսանում է հարյուրավոր

լրատվամիջոցներից մեկը, որոնք ողջ աշխարհում լուսաբանում են Պանամայի փաստաթղթերի վրա հիմնված որևէ պատմություն: Հեռուստակայանը համաձայնեց, և լուսաբանումը սկսվեց ապրիլի 3-ին, երեկոյան ուղիղ ժամը 10-ին:

Պատմությունը նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի մասին էր, ով իր պաշտոնավարման ընթացքում ֆինանսական հայտարարագրերի պահանջները խախտելով, չէր նշել հարյուրավոր միլիոնների ակտիվներ ունեցող մի ընկերության մասին: Առցանց հրապարակման և հեռուստատեսությամբ հեռարձակման համար այն տարբեր ձևաչափեր էր պահանջում: Ուստի OCCRP-ի պատմությունը ձևափոխվեց հեռուստատեսության համար՝ հիմնականում հենվելով այդ բարդ, կորպորատիվ կառուցվածքի մասին Բաքրաձեի՝ տեսախցիկի առջև ներկայացրած բացատրություններին:

Ապրիլի 3-ին, երեկոյան ուղիղ ժամը 10-ին, պատմությունը հրապարակվեց առցանց լրատվամիջոցներով:

Հաջորդ առավոտյան OCCRP-ն կապ հաստատեց տեղական լրատվամիջոցների հետ և առաջարկեց հարցազրույցներ տալ Պանամայի փաստաթղթերի և Իվանիշվիլիի պատմության շուրջ: OCCRP-ն հարցազրույցներ տվեց Rustavi-2, Imedi-TV, Public TV 1 և Associated Press TV լրատվամիջոցներին, ինչպես նաև թոք-շոուներ կազմակերպեց՝ Radio Free Europe-Tbilisi կայանի և Tabula TV-ի հետ, իսկ Indigo ամսագրին համապատասխան հոդված տրամադրեց:

Եթե ունեք պատմություն, եղեք նախաձեռնող և կապ հաստատեք լրատվամիջոցների հետ: Մի սպասեք, որ նրանք ձեզ գտնեն:

Հայտնաբերված անունների հրապարակումը

Հնարավորության դեպքում ձեր պատմության հրապարակումը դարձրեք իրադարձություն: Վրաստանում և շատ այլ երկրներում մեծ էր հետաքրքրությունը այն անունների հանդեպ, որոնք հայտնվել են Պանամայի փաստաթղթերում: Եվ կրկին միջազգային համաձայնություն կար հրապարակման օրվա վերաբերյալ՝ մայիսի 9-ին, տեղական ժամանակով երեկոյան ժամը 10-ին:

Այս անգամ դա երկուշաբթի գիշերն էր, ուստի ուղիղ հեռուստաեթերն այդքան էլ հրապուրիչ տարբերակ չէր, քանի որ այդ ժամին սակավաթիվ են հեռուստադիտողները:

OCCRP-ն կազմակերպեց իր սեփական միջոցառումը Թբիլիսիի Frontline ակումբում, որը քաջ հայտնի է լրագրողներին: Մենք սկսե-

ցինք երեկոյան 9:30-ին՝ բացատրելով, թե ինչ է ներառելու տվյալների հրապարակումը և ինչը՝ ոչ, ինչպես նաև՝ ներկայացնելով այդ տվյալներն օգտագործելու համար մատչելի որոնման գործիքները:

Մենք նաև առաջարկեցինք օգնել այն լրատվամիջոցներին, որոնք նյութ պատրաստելու ցանկություն կունենային, ներառյալ՝ նրանց համար մատչելի դարձնել մեր ձեռքի տակ եղած Պանամայի փաստաթղթերը, որոնք լայն հանրության համար հրապարակման ենթակա չէին:

Մասնակցում էին լրատվամիջոցների ավելի քան 50 ներկայացուցիչներ: Ուղիղ երեկոյան ժամը 10-ին միասին դիտեցինք անունների հրապարակման պահը: Միաժամանակ, մենք ներկայացրեցինք Պանամայի փաստաթղթերում հայտնված 85 հայտնի վրացիների մեր սեփական ցուցակը՝ նախազգուշացնելով, որ զուտ ցուցակում ընդգրկված լինելը որևէ քրեական գործունեություն չի ենթադրում:

Լրատվամիջոցների ներկայացուցիչներն իրենց ուշադրությունը բևեռեցին վրացիների ցուցակին: Մենք ավելի քան մեկ ժամ պատասխանեցինք հարցերին և առաջարկեցինք պատմությունների հետ կապված խորհրդատվություն և օգնություն:

Հաջորդող տասներկու ժամվա ընթացքում մեր տեղական www.occrp.org/ կայքը դիտել էին 5,500 անգամ և տարածել՝ 530 անգամ, չնայած կեսգիշեր էր: Կրկին ակտիվ կապ հաստատեցինք լրատվամիջոցների հետ և առաջարկեցինք հարցազրույցներ տալ: Տեղական լրատվական լուսաբանումը բուռն էր:

Պայմանավորված խաղ Վրաստանում

Այս պատմության շուրջ հեռուստաընկերության հետ համագործակցությունը որոշ խնդիրներ առաջացրեց, որոնք բնորոշ են լրագրողական հետաքննություններին: Մի քանի պայմանավորված խաղերի մասին պնդումների շուրջ քրեական դատավարության վերաբերյալ փաստաթղթերի ծավալը կազմում էր ավելի քան հազար էջ, իսկ դրանց պատճենները ստանալու համար ամիսներ պահանջվեցին՝ մինչև դատապաշտպանին հնարավոր եղավ համոզել: Այդ փաստաթղթերում ներկայացված էր մեծ պատմություն, սակայն այն այդքան էլ հրապուրիչ չէր հեռուստատեսության համար:

Այս անգամ մենք մի քանի ամիս աշխատեցինք Rustavi 2 հեռուստաընկերության հետ՝ ոչ թե զուտ նյութը լուսաբանելով, այլև մեղադրյալներից մի քանիսի հետ տեսահարցազրույցներ ունենալով: Ինչպես նաև Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից ստացանք խաղի տեսագրությու-

նը, որտեղ հստակ երևում էին այն խաղացողները, ովքեր փաստորեն ապահովել էին ցանկալի արդյունքներ:

Քանի որ մենք հրապարակման որևէ կոնկրետ օրվա հանձնառություն չունեինք, թույլ տվեցինք Rustavi 2 հեռուստաընկերությանն ընտրել իրենց լավագույն հեռուստաժամանակը, ապա մեր առցանց պատմությունները հրապարակեցինք հաջորդ օրը՝ մեզ համար առավել հարմար ժամի:

Ifact.ge-ի մեկնարկը

Երեք տարի անց մենք պատրաստ էինք Վրաստանում տեղական կազմակերպություն գրանցել: Նաև ցանկանում էինք այն բրենդավորել որպես տեղական լրատվամիջոց և ավելի պարզ անվանումով, քան Կովկասում կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագիծն է:

Արդյունքում՝ 2016-ի հուլիսի 30-ին բացվեց www.ifact.ge կայքը: Մենք ցանկանում էինք արագորեն թրաֆիկ ապահովել: Մինչդեռ դա հնարավոր չէր հազվադեպ հրապարակումների պարագայում, ինչը, որպես կանոն, բնորոշ է որակյալ հետաքննություններին:

Այժմ մենք փորձում ենք ամենօրյա ինֆոգրաֆիկաներ հրապարակել, որոնք ստեղծում ենք, տեղադրում կայքում և Facebook-ում:

Բացի այդ, ստեղծել ենք Facebook-ի խումբ տեղական խմբագրությունների համար, և ինֆոգրաֆիկաներն անվճար ուղարկում ենք նրանց ամենօրյա հիշեցման հետ: Վերջերս պատրաստված ինֆոգրաֆիկաներից մեկը՝ Թբիլիսիում ավտոմեքենաների գրանցման սրընթաց աճի վերաբերյալ, Հանրային հեռուստատեսությամբ մեկ ժամանոց թոք շոուի հիմք հանդիսացավ:

Նոյեմբերի 30-ին կայացավ մեր կայքի պաշտոնական մեկնարկը: Կրկին վարձեցինք Frontline ակումբն ու հրապարակեցինք մեր ամենավերջին պատմությունը: Այն վերաբերում էր խորհրդարանի ընդունած բյուջետային օրենքներից դուրս գործող կառավարության պահուստային ֆոնդին, որը խախտումներով միլիոնավոր դոլարներ էր ծախսել: Հրավիրված լրատվամիջոցները ստացան ifact-ի շապիկներ:

Գաղափարներ ապագայի համար

- JumpStart Georgia-ն (www.jumpstart.ge/en) վիզուալ տվյալների և դիզայնի նորարարական կազմակերպություն է Թբիլիսիում: Ուսանողական Radio GIPA 94.3 ռադիոկայանի (www.radiogipa.ge) հետ միասին նրանք փորձարկում են տվյալների օգտագործումն աուդիո ֆայլերում:
- OCCRP-ի տեխնիկական թիմն այժմ մեր ինտերնետային կայքերում տեղադրում է «push» հավելվածները, որպեսզի ամեն անգամ նյութերը հրապարակելիս մեր էջի հետևորդները ծանուցում ստանան իրենց բջջային հեռախոսներին:
- Ծրագրում ենք ստեղծել ինտերակտիվ տվյալների բլոգ, որի միջոցով լայն հանրությանը մատչելի կլինեն թե՛ բաց աղբյուրների և թե՛ այլ միջոցներով ստացված տվյալները: Ինչպես ինֆոգրաֆիկաների դեպքում, նպատակն ամենօրյա թրաֆիկի մեծացումն է՝ հանրությանը միջանկյալ տեղեկություններ տրամադրելով հետաքննական պատմությունների ընթացքից:
- Այժմ իրականացվող լավագույն հետաքննական հետազոտություններից մի քանիսը նախատեսված են HBO-ի «Last Week Tonight With John Oliver» կատակերգական շոուի համար: Մենք բանակցում ենք հեռուստահաղորդավարի հետ՝ մեր պատմություններից մի քանիսը տեղեկատվական և ժամանցային ծրագրերի ձևով մատուցելու համար:

Մենք չունենք ցանկալի ցուցանիշներ և, վստահաբար, չունենք բոլոր պատասխանները: Սակայն պատրաստ ենք փորձել ցանկացած միջոց, որպեսզի մեր հետաքննական պատմությունները հնարավորինս լայն տարածում ստանան:

Նշումների համար

ՕԼԵԳ ԽՈՄԵՆՈԿ

ԲԱՑ ՏՎՅԱԼՆԵՐԸ՝ ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Հետաքննող լրագրողների գլոբալ ցանցի (GIJN) տնօրենների խորհրդի անդամ է և Internews Network-ի ավագ մեդիա խորհրդատու: Եղել է հետաքննող լրագրողներին աջակցող կառույցի՝ SCOOP-ի ազգային համակարգողը և տարածաշրջանային հանձնաժողովի անդամ՝ ներգրավված Ուկրաինայի և Բելառուսի ծրագրերում: Ավելի քան 20 տարվա փորձառություն ունի լրագրության և մեդիա կրթության ոլորտում, հետաքննական լրագրության թեմայով դասընթացներ է անցկացնում տարբեր երկրներում, բազմաթիվ գրքերի ու հրապարակումների համահեղինակ է:

Վերջին մի քանի տարիների ընթացքում հետաքննող լրագրողների աշխատանքում լուրջ փոփոխություններ են կատարվում, և դրանք կախված են ոչ միայն գլոբալացման գործընթացներից, այլև հանրային տեղեկությունների մատչելիությունից, դրանց մշակումից և կանոնակարգումից: Մեծ քանակի տվյալների թվայնացումը, կրիչների չափերի փոքրացումը, տեղեկությունների մշակման համակարգի պարզեցումը մեծացնում են հետաքննող լրագրողների աշխատանքի հնարավորություններն ու արդյունավետությունը:

Ամբողջ աշխարհում հանրային տեղեկությունները դառնում են բաց ու հանրամատչելի՝ առանց միջնորդների: Այսինքն՝ ցանկացած մարդ հնարավորություն է ստանում ինքնուրույն գտնելու իրեն անհրաժեշտ տվյալները բաց ու հանրամատչելի աղբյուրներում: Մյուս կողմից՝ ստեղծվում և կատարելագործվում են էլեկտրոնային աղյուսակների տեսքով տեղեկությունների պահպանման և վերլուծության համակարգեր, որոնք ունեն որոնման, զտման, դասակարգման, տեսակավորման և այլ անհրաժեշտ գործիքներ: Դրանք միլիոնավոր գրառումներում արագ որոնման հնարավորություն են ապահովում:

Ընդհանուր առմամբ, խոսելով հանրային տվյալների մատչելիության այսօրվա վիճակի մասին, կարելի է առանձնացնել երեք մակարդակ, և, համապատասխանաբար, հետաքննող լրագրողների համար այդ տեղեկատվության հետագա մշակման տարբեր հնարավորություններ:

Առաջին մակարդակ: Հանրային տեղեկությունների մատչելիությունն ապահովվում է տեղեկատվական հարցումների միջոցով՝ գործող ազգային կամ երկրում վավերացված միջազգային օրենքներին համապատասխան. թղթով կամ էլեկտրոնային փոստով խմբագրությունների կամ լրագրողների ուղարկած հարցումների պատասխանները պատճենվում են և նույն եղանակով ուղարկվում խմբագրություններին:

Այդ պատասխանները պատրաստում են տեղեկատվությունը տնօրինողները՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցները: Մարդկային գործոնը բավականին հաճախ հանգեցնում է սխալների և տեղեկատվության ազատության իրավունքի խախտումների. տեղեկությունների ոչ ամբողջական տրամադրման, ժամկետների խախտման կամ տեղեկությունը տրամադրելուց ապօրինի հրաժարման՝ հիմնված տվյալ լրատվամիջոցի կամ լրագրողի նկատմամբ տեղեկատվության տնօրինողի սուբյեկտիվ վերաբերմունքի վրա:

Հարցմանն ի պատասխան ստացված տեղեկությունները, սկզբնական տեսքով, հարմար չեն մեքենայական մշակման համար: Դրանք համակարգելու համար հարկ է սկանավորել և/կամ տեղեկությունը էլեկտրոնային աղյուսակների տեսքի բերել: Ընդսմին, թղթային կամ սկանավորված պատճենների հիման վրա տվյալների զանգված ստանալը շատ աշխատատար գործընթաց է, որը բավականին մեծ մարդկային ռեսուրսների ներգրավում է պահանջում:

Օրինակ, Ուկրաինայի ժողովրդական պատգամավորների 73875 օգնականների՝ թղթային տեսքով ցուցակները թվայնացվեցին և վերածվեցին տվյալների զանգվածի http://posipaky.info կայքում, որը հնարավորություն է տալիս արագ գտնել անհրաժեշտ տեղեկությունները և տեսնել օգնականների «քոչելը» մի քաղաքական ուժից դեպի մյուսը: Այս գործընթացը շատ ժամանակ չխլեց, քանի որ տվյալները ստացվել էին տպված ցուցակների տեսքով:

Իսկ ահա Ուկրաինայում պետական ծառայողների՝ ձեռքով լրացված և սկանավորված 22 հազար հայտարարագրերի թվայնացման և համեմատելով ստուգման համար www.declarations.com.ua-ի թիմը ստիպված եղավ ուղարկել մի քանի հարյուր հարցում, մշակել և տեղայնացնել քրաուդսորսինգային վերծանման համակարգը՝ http://sotnya.org.ua/type/declaration_task, վերծանման համար ներգրավել 3000 կամավորների:

Երկրորդ մակարդակ: Համակարգչային ինտերֆեյսեր, որոնք ստեղծում են տեղեկատվություն տնօրինողները՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերի հանրային ռեեստրներով տեղեկություններ փնտրելու և ստանալու համար:

Սպառողը, կայքում գրանցվելով կամ առանց դրա (նայած օրենսդրական պահանջի), հնարավորություն է ստանում ինքնուրույն ձևակերպելու հարցումը համակարգում և ստանալու որոնման արդյունքը: Նման համակարգի առավելություններն ակնհայտ են. կրճատվում է տեղեկությունը ստանալու ժամանակը, բացառվում են մարդկային գործոնով պայմանավորված խեղաթյուրումները: Որոնմամբ ստացված տեղեկությունները կարող են լինել խտացված PDF կամ HTML ձևաչափով, ինչը էականորեն հեշտացնում է դրանց հետագա մշակումը: Այսուհանդերձ, համակարգը տալիս է միայն հայցվող տվյալները, և մեծ

զանգվածի հարցումը, որպես կանոն, սահմանափակ է: Համապատասխանաբար, հետաքննող լրագրողին անհրաժեշտ տեղեկությունների զանգվածի ստեղծման համար հարկ է իրականացնել մեծ քանակի կրկնվող գործողություններ՝ պատասխանները հավաքելու և համակարգելու համար: Այս պահանջարկը հանգեցրել է սքրեյփինգի՝ (ներբեռնման) և փարսինգի (հետագա մշակման) համակարգի երևան գալուն: Սա մարդուն փոխարինող ռոբոտ ծրագիր է, որը պարբերաբար դիմում է կայքին, ձևակերպում հարցումը և ստանալով պատասխանը, պահպանում է արդյունքները առաջադրված հերթականությամբ և ձևաչափով՝ աստիճանաբար ձևավորելով հանրային ռեեստրում առկա տեղեկությունների զանգվածը: Համակարգը կարող է կարգաբերվել, որպեսզի որոնի ու ներբեռնի տվյալների թարմացումները:

Այսպես է ձևավորվել պետական գնումների մասին http://z.texty.org.ua տվյալների բազան, որը միավորել է Ուկրաինայի պետական գնումների տեղեկագրի տվյալները՝ սկսած 2008 թվականից և ավտոմատ ներբեռնել է նաև փոփոխությունները՝ վերլուծության ներդրված գործիքներ ունեցող սեփական տվյալների բազայում:

Երրորդ մակարդակ: Կարգավորված, ներբեռնված և ավտոմատ ընթերցվող Excel, CSV կամ JSON ձևաչափերով տվյալների ձևավորում, որոնց մատչելիությունն ապահովվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կայքերի կամ բաց տվյալների հարթակների միջոցով: Նման տվյալների առկայությունն ու դրանց մատչելիության ապահովումը օգտագործողների համար լայն հնարավորություններ են բացում, այդ թվում՝ API-ի (Application Programming Interface) ստեղծում, տեղեկությունների արագ ստացման, մշակման, համակարգման, վերլուծության համակարգերի ներդրում:

Այսպես, http://youcontrol.com.ua/landing_001 ծառայությունը պարունակում է ներբեռնված տվյալներ 25 (այդ թվում՝ իրավաբանական անձանց, հարկային պարտք ունեցողների, դատական վճիռների, հանրային ընկերությունների հաշվետվությունների և այլ) ռեեստրներից ու օգտագործողներին հնարավորություն է տալիս մի քանի վայրկյանում ստանալ բաց տվյալների վրա հիմնված տեղեկանք:

Եվս մի ծառայություն http://opendatabot.com, որ հիմնական մեսինջերների ռոբոտ է և օգտագործողին հնարավորություն է տալիս ուկրաինական ընկերության անվան, տնօրենի ազգանվան, իրավաբանական

հասցեի, միաժամանակ ռեեստրի կոդի միջոցով արագ ստանալ որոնման արդյունքը, ինչպես նաև՝ այդ ընկերության վերաբերյալ դատական գործերի մասին տեղեկությունները:

Նախկին ԽՍՀՄ-ի եվրոպական մասի երկրները տեղեկատվության մատչելիության տարբեր մակարդակների վրա են: Վրաստանում (http://data.gov.ge), Մոլդովայում (http://date.gov.md/ru), Ռուսաստանում (http://data.gov.ru) և Ուկրաինայում (http://data.gov.ua), օրինակ, գոյություն ունեն հանրային տեղեկությունների կառավարական հարթակներ, որոնք ունեն ներբեռնելու հնարավորությամբ հարյուրավոր զանգվածային տվյալներ: Բազմաթիվ բաց տվյալներ ներկայացված են պետական ռեեստրների ձևով՝ տարբեր աստիճանի մատչելիությամբ: Սրա հետ մեկտեղ լրագրողները հաճախ անհրաժեշտություն են ունենում տվյալներ ստանալ տեղեկատվական հարցումների միջոցով՝ հաղթահարելով դժվարությունները և դատարաններում վիճարկելով հանրային տեղեկությունները տրամադրելու անհիմն մերժումները:

Մատչելի տվյալներ ընկերությունների և մարդկանց մասին

Զբաղվելով հետաքննություններով՝ լրագրողը հաճախ կարիք է ունենում ստեղծելու իր ուշադրությանն արժանացած ընկերության կամ մարդու մասին թղթապանակ: Այն, որպես կանոն, կազմված է ստուգված փաստերից. կարևոր է պաշտոնական ու հանրային աղբյուրներից տեղեկությունների հավաքումը, քանի որ այդպիսով ստացված տվյալները էականորեն կրճատում են լրագրողի աշխատանքի իրավական ռիսկերը:

Իրավաբանական անձանց մասին բաց ու թափանցիկ տեղեկությունները, որոնք հնարավոր է ստանալ պաշտոնական աղբյուրներից, որպես կանոն, հետևյալներն են.

- անվանումը, սեփականության ձևը (ՍՊԸ, ԲԲԸ, ՓԲԸ, և այլն), ռեեստրային ծածկագիրը կամ հարկ վճարողի համարը, իրավաբանական հասցեն,
- հիմնադիրները, կանոնադրական կապիտալը, դրա ձևավորման ամսաթիվը, բաժնեմասերը,
- գործունեության տեսակը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման,
- ղեկավար մարմինները (տնօրեն, վարչություն, վերահսկիչ խորհուրդ և այլն),

- կապը (հեռախոս, էլեկտրոնային փոստ, կայքի հասցե),
- գրանցման, վերագրանցման, կայքի ստեղծման ամսաթվերը,
- ֆոնդային շուկայում աշխատող ընկերությունների համար նախատեսված բանկային հաշիվները,
- արտոնագրերը, հատուկ թույլտվությունները, բնական մենաշնորհները,
- իբրև հարկատու գրանցումը, հարկային պարտքերը, արտոնությունները, ԱԱՀ-ի վերադարձը,
- ընկերության դատական պատմությունները,
- պետական գնումներին, աճուրդներին, մասնավորեցման գործարքներին մասնակցությունը,
- հողատարածքները և անշարժ գույքը (սեփականություն, վարձակալություն, օգտագործում),
- հիմնական ֆոնդերը (այս տեղեկությունը կարող է մատչելի լինել միայն պետական, կոմունալ ձեռնարկությունների և ֆոնդային շուկայի մասնակից ընկերությունների դեպքում),
- գյուտերը, արդյունաբերական և առևտրային նշաններն ու մտավոր սեփականության այլ օբյեկտները:

Այսուհանդերձ, տարածաշրջանի որոշ երկրներում բացառություններ կան. Ադրբեջանում, օրինակ, Խադիջա Իսմայիլովայի հետաքննություններից հետո հիմնադիրների և բաժնեմասերի վերաբերյալ տեղեկություններն օրենսդրորեն դասվել են սահմանափակ մատչելիների թվին:

Ինչ վերաբերում է անձերին, ապա պաշտոնական տվյալներ առավելագույնը հնարավոր է ստանալ միայն հանրային դեմքերի, որպես կանոն՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների մասին: Հետաքննության հերոս հանդիսացող անձի մասին թղթապանակ կազմելիս՝ լրագրողին հետաքրքրում են հետևյալ տեղեկությունները.

- անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օրը, վայրը, քաղաքացիությունը (այս տվյալները մատչելի են, եթե անձն առաջադրվել և մասնակցել է ընտրություններին կամ համապատասխան մրցույթ անցնելով՝ պաշտոն է ստանձնել),

- գրանցման կամ հաշվառման վայրը (հաճախ կարող է չհամապատասխանել բնակության վայրին), հարկ վճարողի անձնական համարը (եթե անհատ ձեռնարկատեր է, նրա հարկային համարը կա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ռեեստրում),
- կրթությունը (դիպլոմները, գիտական աստիճաններն ու կոչումները), գիտական հրատարակություններն ու գիտական թեզի ավտոռեֆերատները (այս տեղեկությունները բաց են ու հանրամատչելի և պահպանվում են ազգային գիտական գրադարանների թեզերի կատալոգում),
- կապը (հեռախոս, էլեկտրոնային փոստ)
- կարիերան, ծառայողական առաջխաղացումների ցանկը (նախկին ու ներկա աշխատատեղերը), պետական ծառայությունն ու աշխատանքը տեղական ինքնակառավարման մարմիններում,
- հասարակական գործունեությունը (մասնակցությունը հասարակական կազմակերպություններին), կուսակցական պատկանելությունը, կրոնը,
- դատվածությունները, վարչական իրավախախտումները,
- զինվորական ծառայությունը, մարտական գործողություններին մասնակցությունը,
- եկամուտները (աշխատավարձ, նյութական օգնություններ, շահաբաժիններ, վարձատվությունից վճարներ և այլն) և գույքը (անշարժ գույք, հող, բանկային հաշիվներ, տրանսպորտային միջոցներ),
- բիզնեսները (մասնակցություն ընկերություններին, մասնաբաժիններ, ֆինանսական պարտավորություններ),
- ոչ նյութական ակտիվներ (գյուտեր, մտավոր սեփականության իրավունքներ):

Թվարկված տվյալներից շատերը հաճախ ենթադատ են տարածաշրջանի բոլոր երկրներում գործող անձնական տվյալների մասին օրենքներին: Այսուհանդերձ, հանրային դեմքերի գործունեության հետաքննություն իրականացնելիս հանրային շահը մարդու մասին տեղեկությունները հրապարակելու փաստարկ է: Գոյություն ունի նաև օրենսդրական կարգավորում, ըստ որի նեղացվում են հանրային գումարներին կամ հասարակական սեփականությանն առնչվող անձանց մասնավոր

կյանքի սահմանները: Ուկրաինայում, օրինակ, հանրային են համարվում բյուջետային միջոցներ կամ ունեցվածք տնօրինող անձանց անունները, ազգանուններն ու հայրանունները և իրավաբանական անձանց անվանումները: Մյուս կողմից, Ռուսաստանի իրավական նորմերը էականորեն նվազեցնում են լրագրողների ազատությունն անձի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու մասով, և դատարանը առավել հաճախ բռնում է պաշտոնյաների կողմը, քան հասարակության շահերի համար գործող լրագրողների:

Հանրային տեղեկությունների շտեմարան

Տարածաշրջանի համարյա բոլոր երկրները համացանցում ունեն հանրային ռեեստրներ, որոնցում հնարավոր է գտնել՝

- օրենսդրությունը և պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերը,
- իրավաբանական անձանց ու ձեռնարկատերերի գրանցման մասին տեղեկությունները,
- հողհատկացումների մասին որոշումները, հողատարածքների նպատակային նշանակության մասին տվյալները,
- համայնքային սեփականության մասնավորեցման մասին որոշումները,
- հարկատուների հաշվառման և հարկային պարտք ունեցողների մասին տեղեկությունները,
- պետական գնումների մասին հայտարարությունները և մրցույթների հաղթողների մասին տեղեկությունները,
- ֆոնդային շուկայի մասնակիցների, արժեթղթեր թողարկողների և նրանց հաշվետվությունների մասին տեղեկությունները,
- բանկերի, ֆինանսավարկային հաստատությունների, ապահովագրական ընկերությունների մասին տվյալները,
- դատական վճիռները,
- մտավոր սեփականության իրավունքի և օբյեկտների մասին տվյալները:

Ստորև բերված են Ադրբեջանի, Հայաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի, Վրաստանի և Ուկրաինայի հանրային տեղեկությունների աղբյուրներին հղումները՝ 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ:

Այս բոլոր երկրներն ունեն օրենսդրական և այլ նորմատիվ իրավական փաստաթղթերի բազա՝ որոնման գործիքներով.

- Ադրբեջան՝ http://bit.ly/2kK9MVU
- Հայաստան՝ http://www.arlis.am
- Մոլդովա՝ http://lex.justice.md
- Ռուսաստան՝ http://bit.ly/2kKi28l
- Վրաստան՝ http://matsne.gov.ge
- Ուկրաինա՝ http://bit.ly/2kK85al

Որպես կանոն իրավական փաստաթղթերի մեծամասնությունն ազգային լեզուներով է, սակայն սահմանադրությունները, օրենսգրքերը, կարևոր օրենքները առկա են նաև ռուսերեն և/կամ անգլերեն:

Իրավաբանական անձանց և ձեռնարկատերերի գրանցման մասին տեղեկություններ կան հետևյալ կայքերում.

- Ադրբեջան՝ http://bit.ly/2kifG3
- Հայաստան՝ http://www.e-register.am/am
- Մոլդովա՝ http://www.cis.gov.md
- Ռուսաստան՝ http://egrul.nalog.ru
- Վրաստան՝ http://bit.ly/2kipLNJ
- Ուկրաինա՝ http://bit.ly/1XE6z7y

Որոնման արդյունքներն ըստ երկրների տարբերվում են: Ադրբեջանական ռեեստրը, օրինակ, կտեղեկացնի միայն ընկերության անվանումն ու հարկային համարը, այն դեպքում, երբ ռուսականում դուք կստանաք ամբողջական քաղվածք՝ PDF ձևաչափով: Ուկրաինայում ռեեստրում անվճար որոնումը հնարավորություն է տալիս փնտրել անվանումով և հաշվառման համարով, և կտրամադրվի քաղվածք՝ ընկերության ընթացիկ վիճակի մասին, իսկ վճարովի որոնումը հնարավորություն կտա փնտրել տնօրենի անունով, հասցեով և այլ չափորոշիչներով:

Դատական վճիռների ցանկ տարածաշրջանի ոչ բոլոր երկրներն ունեն, օրինակ, այն հանրային մատչելիություն չունի Ադրբեջանում.

- Հայաստան՝ http://bit.ly/2k7ZQGx
- Մոլդովա՝ http://bit.ly/2jlI0va
- Ռուսաստան՝ http://sudrf.ru – ՌԴ-ի պետական ավտոմատացված համակարգի «Արդարադատություն» պաշտոնական հարթակն ունի մոտ 32 միլիոն փաստաթուղթ, ոչ պաշտոնական կուտակիչ համակարգը՝ http://rospravosudie.com 2016 թվականի դեկտեմբերի սկզբի դրությամբ՝ մոտ 111 միլիոն փաստաթուղթ.
- Վրաստան՝ http://prg.supremecourt.ge
- Ուկրաինա՝ http://reyestr.court.gov.ua

Որպես կանոն, դատական վճիռների որոնման համակարգերը ունենում են տարբեր զտիչներ՝ ըստ դատաքննության տեսակի, տարածաշրջանի, ժամանակի, դատավորի անվան, ունենում են նաև տեքստային որոնում, ինչը հեշտացնում է անհրաժեշտ վճիռները գտնելը: Որոնվող նյութը կարող է լինել ինչպես PDF, անպես էլ html ձևաչափով:

Պետական գնումների մասին տեղեկություններն առկա են համապատասխան ռեսուրսներում, որոնք, որպես կանոն, գրանցում են պահանջում: Տրամադրվող տեղեկության ծավալը տատանվում է միայն մրցույթում հաղթողի անվան և բյուջետային միջոցներից տրամադրվող գումարի մասին աղյուսակից մինչև փաստաթղթերի ողջ փաթեթը՝ սկսած մրցույթի հայտարարումից, պայմանագրից ընդհուպ մինչև կատարված աշխատանքի վերաբերյալ ակտը:

- Ադրբեջան՝ http://tender.gov.az/new/?lan=az
- Հայաստան՝ http://www.e-tender.am
- Մոլդովա՝ http://tender.gov.md/ro
- Ռուսաստան՝ http://bit.ly/2jlm4aV
- Վրաստան՝ http://bit.ly/2ki9GHO
- Ուկրաինա՝ http://prozorro.gov.ua

Անշարժ գույքի և հողատարածքների նկատմամբ գույքային իրավունքների մասին տեղեկություններն ըստ երկրների տարբեր չափով են մատչելի և էականորեն տարբերվում են ծավալով: Բացարձակ մեծամասնությամբ անշարժ գույքի և հողի ռեեստրները պահանջում են տվյալ երկրի քաղաքացիների գրանցում, և նման տեղեկությունների տրամադրումը վճարովի է:

- Ադրբեջան - անշարժ գույքի նկատմամբ իրավունքների http://bit.ly/2kio97f ռեեստրը որոնման սահմանափակ հնարավորություններ ունի, պահանջում է անշարժ գույքի հաշվառման համարը, հողատարածքների մասին տեղեկությունները մատչելի չեն:
- Հայաստան - կադաստրի պետական կոմիտեի http://bit.ly/2kifmSn կայքը՝ անշարժ գույքի մասին տեղեկությունների որոնման համար, ինչպես նաև՝ http://www.e-cadastre.am/map կայքը՝ հողատարածքները քարտեզի վրա փնտրելու հնարավորությամբ:
- Մոլդովա - http://bit.ly/2kKvucd կադաստրային քարտեզը հնարավորություն է տալիս որոնելու հողամասի կադաստրային համարով:
- Ռուսաստան - անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների և գործարքների https://rosreestr.ru/site/ ռեեստրը հանրության համար մատչելի տեղեկություններ է տալիս անշարժ գույքի գրանցված իրավունքների մասին, իսկ կադաստրային անշարժ գույքի ռեեստրը՝ http://bit.ly/2jlyO19, հողատարածքների մասին մատչելի տվյալներ է պարունակում: Հանրային կադաստրային քարտեզը՝ http://pkk5.rosreestr.ru, հեշտացնում է հողամասերի մասին տեղեկությունների որոնումը:
- Վրաստան - գույքային իրավունքների գրանցման կայքը՝ https://napr.gov.ge/udzravi որոնման http://bit.ly/2jljt0I ծառայությամբ:
- Ուկրաինա - արդարադատության նախարարության վարչական ծառայությունների գրասենյակի http://bit.ly/2jlQgLL կայքը վճարովի է, պահանջում է գրանցում և հնարավորություն է տալիս որոնելու ըստ անշարժ գույքի անվանման կամ հասցեի: Կադաստրային http://bit.ly/2qdqzDu քարտեզը և ոչ պաշտոնական http://bit.ly/2ki73G7 քարտեզը, հնարավորություն են տալիս, BankID-ում գրանցվելով, անվճար տեղեկություններ ստանալ հողակտորների մասին:

Մտավոր սեփականությունը և ոչ գույքային իրավունքները ներկայացնում են մտավոր սեփականության գործակալություն-ների և ինստիտուտների ռեեստրները, ընդսմին՝ այնտեղ պահվող տեղեկությունները համարվում են բաց, քանի որ դրանց հանրային բնույթը և մատչելիությունը կարգավորվում է միջազգային պա-տենտային իրավունքով:

- Ադրբեջան – հեղինակային իրավունքների http://bit.ly/2jIlUb0 կայքը ձեզ կուղղորդի դեպի էլեկտրոնային ծառայությունների http://bit.ly/2kKkrQd հարթակ, որը գրանցում է պահանջում: Սա միակն է տարածաշրջանում, որ նման պահանջ ունի:
- Հայաստան – Մտավոր սեփականության գործակալության http://www.aipa.am/hy կայքը ունի ապրանքանշանների, պա-տենտների և այլ օբյեկտների որոնում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:
- Մոլդովա – Մտավոր սեփականության գործակալության http://www.agepi.gov.md/ro կայքում կարելի է տեղեկություններ գտնել Մոլդովայի մտավոր սեփականության օբյեկտների և իրա-վատերերի մասին:
- Ռուսաստան – Արդյունաբերական սեփականության դաշնային ինստիտուտի կայքը ամբողջական որոնման համակարգ ունի՝ http://bit.ly/2juhylv
- Վրաստան – Մտավոր սեփականության ազգային կենտրոնի http://www.sakpatenti.org.ge կայքը պաշտոնական տեղեկագրերի տվյալները ներկայացնում է PDF ձևաչափով:
- Ուկրաինա – Արդյունաբերական սեփականության «Ուկրպա-տենտ» ինստիտուտի կայքում առկա է մի քանի տվյալների բա-զա՝ որոնման համակարգերով՝ http://bit.ly/2jIQF0J:

Վերը բերվածը տարածաշրջանի երկրների հանրային տեղեկություն-ների ռեեստրների ամբողջական ցանկը չէ, այլ մի փոքր մասը, որ կարևոր է հետաքննող լրագրողների գործունեության համար, քանի որ դրանց տեղեկությունները պաշտոնական են, ինչը, բնականաբար, կրճատում է հրապարակմանն առնչվող ռիսկերը:

ԼՈՒԻՍ ԼԻՖ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ամերիկյան համալսարանի Հաղորդակցության դպրոցի Հետաքննական լրագրության արհեստանոցի հրավիրյալ մասնագետ է: Եղել է լրագրողական կրթությամբ զբաղվող International Reporting Project-ի հիմնադիր փոխտնօրենը, համագործակցել է Լրագրողների միջազգային կենտրոնի (ICFJ) հետ: Թղթակցել է հայտնի լրատվամիջոցների՝ այդ թվում CBS News “60 Minutes”, The New York Times, Time, The Boston Globe Magazine:

2016թ.-ի ԱՄՆ նախագահական ընտրությունների շուրջ հրապարակված զարմանալի վիճակագրության ողջ հոսքի մեջ առանձնանում է մեկ տվյալ. քվեարկության իրավունք ունեցող գրեթե 100 միլիոն ընտրողներ՝ ընտրազանգվածի գրեթե 47 տոկոսը, քվեարկության չեն ներկայացել: Սա ամենացածր ցուցանիշն է վերջին 20 տարիների ընթացքում: Երկիրը պատրաստվում է անցում կատարել արմատապես տարբեր քաղաքական կուրսի, իսկ քվեարկող հանրության գրեթե կեսը անհաղորդ է գործընթացներին:

Անշուշտ, պատճառները բազում դատողությունների տեղիք են տալիս. հնարավոր է մարդիկ հուսախաբ են եղել համակարգից կամ այլևս չեն հավատում, որ պետական նշանակության հարցերում իրենց ձայնը կշիռ ունի: Բայց երբ այդքան մարդ չի կիրառում ժողովրդավարության իր ամենակարևոր իրավունքներից մեկը, ապա դա արդեն մեծ խնդրի ախտանիշ է:

«Թվապատում» կոնֆերանսը հետաքննական լրագրության մասին է, այն պահպանիչ-հսկողական դերի, որը կատարում է ազատ մեդիան՝ ասելով ճշմարտությունը իշխանություններին: Սակայն որպեսզի հետաքննող լրագրողների կրած անհավանական ռիսկերը իմաստ ունենան ու ավելի հաշվետու դարձնեն կառավարությունների ու ընկերությունների աշխատանքը, անհրաժեշտ է, որ հասարակությունը վստահի լրագրողների հայթայթած տեղեկություններին ու գիտակցի, որ կարելի է գործողությունների դիմել՝ օգտագործելով այդ տեղեկությունները: Այսօր իմ երկրում (հավանաբար նաև ձեր) ավելի քիչ են վստահում մեդիայի հաղորդած լուրերին, քան նախորդ տասնամյակներում էր:

Վերջին ընտրությունները բացահայտեցին ԱՄՆ-ում մեդիայի մութ կամ թերի կողմերը և նախանշեցին այն աշխատանքը, որը պետք է կատարենք, նաև ի ցույց դրեցին կառուցվածքային թերությունները: Այդ ընտրությունների ժամանակ ԱՄՆ-ի ԶԼՄ-ների մասնակցության և առաջիկա մարտահրավերների լավագույն վերլուծություններից մեկը կատարել է Ջոշուա Բենթոնը, որը գլխավորում է Հարվարդի համալսարանի Նեյման լաբորատորիան (նա նաև Միջազգային լրատվության նախագծի նախկին անդամ է):

Ըստ Բենթոնի կանխատեսումների, այն ուժերը, որոնք 2016թ.-ի նոյեմբերին ԱՄՆ-ի ԶԼՄ-ներին մղել են ձախողումների, ամենայն հավանականությամբ կսաստկանան: Նրա նշած բազմաթիվ գործոնների շարքում՝ ներառյալ կեղծ լուրերի թվի աճը և լրատվամիջոցներին արձագանքող սոցիալական հարթակների սահմանափակ հեռանկարային

հնարավորությունները, էական է տեղական լրատվական կազմակերպությունների նվազումը, այն, ինչ նա անվանում է «համայնքի ողնաշար»:

Թվանշային դարաշրջանի տնտեսությունը մասամբ պատճառ է դարձել, որ ԱՄՆ-ի ԶԼՄ-ները կենտրոնացել են Նյու Յորքում, Լոս Անջելեսում և մայրաքաղաք Վաշինգտոնում՝ նվազելով կամ գրեթե վերանալով երկրի կենտրոնական նահանգներում:

Լրագրողներին անհրաժեշտ է գտնել նոր ուղիներ բազմազան համայնքների հետ հարաբերություններ կառուցելու համար՝ օգտագործելով ցանցային աշխարհի հնարավորությունները: Աջակցել քաղաքացիներին, ակտիվացնել քաղաքացիական կյանքը, քաջալերել վարել ավելի արդյունավետ դիսկուրս, որը չի սահմանափակվի սոցիալական մեդիայի “share” և “like” կոճակներով:

Ես ուսումնասիրում եմ լրագրողական աշխարհի ներսում և դրանից դուրս գործող քաղաքացիական մասնակցության նոր մոդելները, որոնք վերաձևում և նորովի են ներկայացնում լրագրողի դերը քաղաքացիական կյանքում: Լսարանը անհաղորդ դիտողից վերածվում է տեղեկատվություն հայթայթող ակտիվ մասնակցի: Այս մոտեցումները հանրությանը հնարավորություն են տալիս սեփական փորձով ստուգել փաստերի ուժը և կառուցել պատմությունները փաստերի հիման վրա: Մարդիկ, որոնք կիրառում են այս նոր մոդելները, ամենևին էլ չեն ակնկալում, թե մասնակիցները կսկսեն զբաղվել ամբողջ աշխարհի գործերով: Նրանք մասնակիցներին խնդրում են անել ընդամենը մեկ բան և բարձր են գնահատում ցանկացած ներդրում (քննարկումները ֆորումներում, մեկնաբանությունները, սեփական հետազոտությունները, փաստերի ստուգումը):

Բերենք մի քանի օրինակ.

WDET-ը, որը Wayne պետական համալսարանում ծվարած մի փոքր ռադիոկայան է, ունկնդիրներին առաջարկեց մասնակցել Դեթրոյթի այգու վերահսկողության ծրագրին և հայտնել հանրային այգու պահպանման վերաբերյալ իրենց կարծիքները: Ստեղծեցին մի քարտեզ, որտեղ քաղաքացիները կարող էին գրառումներ կատարել այգու պահպանման և այլ խնդիրների շուրջ՝ քաղաքապետարանի և լրագրողների դիտարկումներին զուգընթաց կատարելով իրենց ներդրումը: Տեղեկությունների այսպիսի մեծ պաշարով զինված՝ WDET-ը ցույց տվեց, որ այգու հողատարածքի 32 տոկոսը փաստորեն անխնամ է: Սա համայնքին մղեց, որ կառավարությանը անհապաղ գործողություններ ձեռնարկելու պահանջ ներկայացնի:

ProPublica-ն՝ ԱՄՆ-ի շահույթ չհետապնդող առաջատար հետաքննական լրագրության կազմակերպություններից մեկը, մի քանի հետաքննություններում օգտագործել է այս մեթոդը: Ծրագրերից մեկն իրականացնելիս, հանրությանը խնդրել են պատմել փոթորիկը վերապրելուց հետո Կարմիր Խաչի բարեգործական հիմնադրամից օգնություն ստանալու իրենց փորձառության մասին, երբ կազմակերպությունն ինքը հրաժարվել էր բացահայտել այդ տեղեկությունները: ProPublica-ն ստեղծեց թվային մի ապահով ֆայլ-փոստարկղ այդ փաստաթղթերի համար:

Մեկ այլ հետաքրքիր մոդել ծնվել է Չիկագոյի հանրային ռադիոկայանում՝ WBEZ-ում: Նրանց «Հարցասեր քաղաքը» թվային հարթակը առաջադրում և քննարկում է հանրության բարձրացրած տարաբնույթ խնդիրները: Կայանն ունկնդիրներին հարցնում է Չիկագոյի կյանքի խնդիրների մասին և դրանց հիման վրա պատմություններ է ստեղծում՝ նպատակ ունենալով լուծումներ գտնել և այդ գործընթացում ներգրավում է նաև իր ունկնդիրներին:

«Հարցասեր քաղաքի» հիմնադիրներից մեկն ավելի հեռուն գնաց՝ հիմնելով Hearken ընկերությունը, որը համանման գործիքներ է առաջարկում լրատվական խմբագրություններին արդեն գլոբալ մասշտաբով՝ օգնելով ունկնդիր հասարակությանը մասնակից դառնալ լրատվական պատմությունների ստեղծմանը: Նրանք կիրառում են գնային սահող սանդղակ՝ այնպես որ նույնիսկ ամենափոքր խմբագրությունները կարողանան օգտվել: Hearken-ի գործիքներն այսօր կիրառվում են հինգ մայրցամաքների վաթսուն լրատվամիջոցներում:

Գործող ֆորումներն ու միջոցառումները խրախուսելը հնարավորություն է ընձեռում լրատվամիջոցներին հասարակության հետ խորը, բազմամակարդակ հարաբերություններ կառուցել և քաղաքացիական երկխոսություն խթանել: Մյուս կողմից դա կարող է նաև շահութաբեր լինել:

Տեխասում գտնվող The Texas Tribune փոքրիկ, շահույթ չհետապնդող լրատվամիջոցը, որպես բիզնես մոդել, ստեղծել է դինամիկ համագործակցություն ուղիղ եթերով հեռարձակումների և առցանց լրագրության միջև: Աշխատելով նահանգի իրենց գործընկերների և համալսարանների հետ՝ Tribune-ը քաղաքական գործիչներին հրավիրում է մասնակցելու ուղիղ եթերով ֆորումներին, որտեղ քննարկվում են տեղական նշանակություն ունեցող հարցեր և պատասխաններ են տրվում հասարակության առաջադրած խնդիրներին: Այս կերպ նրանք նաև նոր լսարան են ստեղծում, նոր ունկնդիրների են ներգրավում իրենց առցանց հարթակում: Սա դառնում է հանրային արձագանքման և հետադարձ կապի մի արդյունավետ գործիք:

Այնուամենայնիվ, այս տրանսֆորմատիվ մոդելները բախվում են որոշակի արգելքների: Այն պարագայում, երբ Facebook-ը և Google-ը կլանում են գովազդային շահույթների առյուծի բաժինը, ԱՄՆ-ի տեղական լրատվական կազմակերպությունների մեծ մասը կրճատման ուղի են բռնել: Ըստ Ամերիկյան լրատվության ինստիտուտի տնօրեն Թոմ Ռոզենշտեյլի՝ վերջին տարիներին թերթերի լրատվության բաժիններում աշխատող լրագրողների թիվը 35 տոկոսով կրճատվել է՝ առանց (իբրև փոխհատուցում) ապահովելու տեղական այլ ԶԼՄ-ների աճը:

Իսկ ավելի փոքր համայնքներում ոլորտը կաթվածահար անող այս գործընթացը շարունակվում է: Շատ խմբագրություններ պարզապես չունեն մասնագիտական ներուժ, որը ընդունակ է պատասխանելու այնպիսի բարդ հարցերի, որոնք պահանջում են մեծ քանակի տվյալների հավաքագրում կամ ստեղծում: Դա հատկապես բարդ է այն դեպքերում, երբ չկա պաշտոնական տվյալների հուսալի բազա:

Այս իրավիճակից ելք գտնելու որոնումներն ինձ տարան քաղաքացիների խնդիրներն ուսումնասիրող ոլորտ. այսօր թափ է հավաքում համաշխարհային մի շարժում, որը հանրային ներգրավվածությունը և քաղաքացիական իրավունքների հզորացումը համարում է իր անկյունաքարերից մեկը: Հիմնադրվելով 2014 թվականին՝ Քաղաքացիական գիտություն միությունը (Citizen Science Association), այսօր ունի 5000 անդամներ 81 երկրներում: Կա նաև Քաղաքացիների եվրոպական միություն: Հարյուր հազարավոր քաղաքացիներ, գիտնականների ղեկավարությամբ, մասնակցել են տեղեկությունների հավաքմանը, հաղորդմանն ու վերլուծությանը՝ առաջադրված գիտական հարցերին (որոնցից շատերը վերաբերում են սոցիալական խնդիրներին և մարտահրավերներին) պատասխան գտնելու նպատակով: Նրանց աշխատանքով մշակվել և ստեղծվել են տվյալների մեծ բազա հավաքագրելու, տեսականորեն և տեղեկատվության որակն ապահովելու նոր թվային գործիքներ: Նրանց մեթոդներից օգտվում են կառավարությունները: Եվրոպական միությունը հիսուն միլիոն եվրո է ծախսել շրջակա միջավայրի աղտոտման, կենսաբազմազանության և ծովային ջրերի աղտոտման խնդիրների նկատմամբ հսկողություն իրականացնող քաղաքացիական հինգ դիտակենտրոնների համար: ԱՄՆ-ի կառավարությունը ևս քաղաքացիներից ստացվող տեղեկություններն ընդգրկել է իր աշխատանքներում: Քսանհինգ տարբեր դաշնային գործակալություններ աջակցում են «քաղաքացիական գիտության» և հանրային իրազեկման ավելի քան երեք հարյուր ծրագրերին: Տեսականորեն, այն տեղեկությունները, որոնք վերջիններս հավաքում են, հասանելի է նաև հանրության լայն շրջանակներին:

Մեկ այլ ոլորտ, որն ուսումնասիրել եմ, մեդիայի, համայքների և գիտական հաստատությունների միջև եղած համագործակցությունն է, երբ անդրադարձ է կատարվում այն խնդիրներին, որոնք ինքնուրույն չեն կարող հաղթահարվել: Մարդիկ հարաբերություններ են կառուցում ոչ միայն մեդիայի, այլև միմյանց հետ:

Ֆլինթում (Միչիգան նահանգ) կապարով թունավորված ջրի լուրջ խնդիրը բարձրացվեց շնորհիվ համայնքի անդամների, լրագրողների և գիտնականների հանպատրաստից ստեղծված դաշինքի: Նրանք միմյանցից անկախ հետազոտեցին ջուրն ու երեխաների արյունը՝ ստանալով հիմնավոր փաստարկներ, որոնք խիստ կասկածի տակ էին դնում նահանգային և տեղական մարմինների ներկայացրած խեղաթյուրված տվյալները:

Նյու Յորքում քրեական արդարադատության John Jay քոլեջը և Pace համալսարանի իրավաբանական կենտրոնը համայնքի անդամներին ներգրավեցին մի հետազոտական նախագծում՝ պարզելու համար, թե ինչ է նշանակում Նյու Յորք քաղաքում ոստիկանական հսկողության տակ մեծանալը: Մի քանի ամսվա ընթացքում տեղական բնակիչներից հավաքվեց ավելի քան հազար պատասխան. մարդիկ նկարագրում էին իրենց փորձառությունը կապված Նյու Յորքի ոստիկանության բաժանմունքների հետ: Այնուհետև այդ տվյալները վերլուծության ենթարկվեցին համալսարանական գիտնականների հետ: Ստացված արդյունքները մարտահրավեր էին Նյու Յորքի ոստիկանության բաժնի ներկայացրած պաշտոնական հաշվետվություններին և ոստիկանական բարեփոխումներին ուղղված ջանքերին:

«Վերահսկողության լաբորատորիան» (The Accountability Lab) համայնքային մի ինկուբացիոն մոդել է, որը նպաստում է աշխատանքների արդյունքների թափանցիկությանն ու հաշվետվողականությանը: Տեղական լաբորատորիաներն աշխատում են լրագրողների, համալսարանական ուսանողության, կինոռեժիսորների և այլոց հետ՝ նրանց ընտրած թեմաներով: Լիբերիայում, օրինակ, նրանք քննարկեցին համայնքներից մեկում որակյալ խմելու ջրի պակասի խնդիրը, ինչպես նաև ստեղծեցին ամեն շաբաթյա ռադիոշոու՝ թեժ գծով:

Նեպալում տեղի ունեցած երկրաշարժից հետո տեղի լրագրողների հետ, լաբորատորիան ստեղծեց քաղաքացիների օգնության կետեր, որտեղ կամավորներ էին աշխատում: Նրանք մարդկանց օգնում էին լրացնել աղետի հետ կապված մարդասիրական օգնության ձևաթղթերը: Այդ ծրագիրն ի վերջո հանգեցրեց լրագրողների կողմից տասնչորս շրջան-

ներում անցկացվող հարցումների՝ պարզելու, թե որքանով արդյունավետ է եղել մարդասիրական օգնությունը: Արդյունքները բաժանվեցին տեղական ռադիոյով թոք շոուներ անցկացնող հաղորդավարներին: Մի քանի երկրներում լաբորատորիան ստեղծեց մի հեռուստահաղորդում, որը կոչվում է «Շիտակության կուռք»: Հաղորդման ժամանակ մարդկանց հնարավորություն է տրվում անվանել և իրենց ձայնը տալ կառավարության իրենց նախընտրած ազնիվ պաշտոնյային:

Այս նոր մոդելները ցույց են տալիս, թե որքան շատ բան կարելի է անել: Երբ մարդիկ հանրային հարցումների թղթեր են լրացնում, ստուգում են իրենց ջուրը և մասնակցում այլ փոքր նախաձեռնությունների, համայնքի յուրաքանչյուր անդամ, փաստորեն, պատմում է իր սեփական պատմությունը, որը ներառվում է ավելի մեծ համայնքային պատմության մեջ: Նրանք միմյանց հետ հարաբերություններ են կերտում նաև ԶԼՄ-ների միջոցով՝ միմյանց ավելի լավ ճանաչելով, և, հուսանք, սկսելով ավելի շատ վստահել միմյանց: Սա նաև խթանում է մասնակիցների վստահությունն իրենց ուժերի նկատմամբ և համարձակությունը՝ դիմելու քաղաքացիական գործողությունների:

Տարբեր ուսումնասիրություններ փաստում են՝ համայնքային կյանքի մեջ ընդգրկված քաղաքացիներն ավելի ակտիվ են մասնակցում ընտրություններին և քվեարկում: Նոր տեղեկատվական էկոհամակարգում մեդիայի՝ պահապանի դերը փոխվում է: Եթե լրագրողներին հաջողվի գտնել իրենց համայնքների հետ հարաբերությունները հաստատող և զարգացնող նոր՝ ավելի արդյունավետ ուղիներ, ապա նրանք ձեռք կբերեն հանրության վստահությունը, իսկ հետաքննական լրագրությունը կդառնա շատ ավելի կարող ուժ:

Նշումների համար

ՌԻՏԱՍ ՍՏԱՍԵԼԻՍ

ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵՍ ԱՆՀՆԱՐԻՆԸ ԴԱՐՁՆԵԼ ՀՆԱՐԱՎՈՐ

Անկախ լրագրող է, խորհրդատու՝ Եվրոպական հումանիտար համալսարանում: Եղել է Լիտվայի հանրային հեռուսփաընկերության լուրերի բաժնի գլխավոր խմբագիրը: Թղթակցել է Verslo zinios բիզնես օրաթերթին: Որպես խմբագիր աշխատել է Verslo klase, Lietuvos zinios, Lietuvos zinios, Respublika պարբերականներում: 1989-1992 թթ.-ին լիտվական լրատվամիջոցների համար նյութեր է պատրաստել Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և Ռուսաստանից:

Հետաքննական լրագրությունը ենթադրում է գտնել տեղեկություններ, որոնք հանրային արժեք ունեն, սակայն, հնարավոր է՝ տեղեկությունը, որ ձեռք եք բերել, բոլորովին էլ այն չէ, ինչ ձեզ պետք էր, կամ անհրաժեշտ տեղեկությունն անմատչելի է, և դրա ձեռք բերումը անասելի ջանքեր է պահանջում: Ի՞նչ անել նման դեպքերում:

Քննարկենք այս տարբերակները հետևյալ երկու օրինակով:

Մեծամորի ատոմային էլեկտրակայանում (ԱԷԿ) փորձարկել են այն արտակարգ իրավիճակը, որը հանգեցրել էր ճապոնական «Ֆուկուսիմա-1» ԱԷԿ-ի խափանման: Պարզվել է, որ նման վտանգ հայկական ԱԷԿ-ին չի սպառնում: (Նյութը՝ Վիքիպեդիա ազատ հանրագիտարանից):

Մեր խնդիրն է ստուգել, թե արդյոք այս տեղեկությունը համապատասխանում է իրականությանը: Նախ համոզվեք, որ Վիքիպեդիայում բացակայում է ակտիվ հղումն այդ տեղեկության սկզբնաղբյուրին: Ապա ուսումնասիրեք մամուլը: Հնարավոր է՝ որևէ մեկը գրել է այդ մասին, ընդ որում՝ հիշատակելով այն անձանց, որոնց կարելի է համարել մատչելի սկզբնաղբյուրներ: Եթե կան լիովին կամ մասնակի հասանելի փաստաթղթեր, ծանոթացեք դրանց հետ:

Հնարավոր է՝ դուք այդ թեմային (ատոմային էներգետիկային) լավ չեք տիրապետում, հարկ է կապվել փորձագետների հետ: Սկսեք նրանցից, ովքեր ամենից քիչն են կապված կառավարության հետ և շահ չունեն անմիջապես «ամեն ինչ կարգին է» ասելու:

Ուսումնասիրեք միջազգային փորձը. փորձարկումներ (a la Fukushima սթրես-թեսթեր) անց են կացվել ոչ միայն Հայաստանում:

Հիշեք հայկական ԱԷԿ-ի ողջ պատմությունը՝ կառուցումը, անվտանգության հարցերը, մեծ ու փոքր երկրաշարժերի, բնական այլ աղետների ժամանակ միջադեպերը: Պարզեք, թե որ կառույցն է իրականացրել փորձարկումը. կայանի օպերատո՞րը, անկախ պետական կարգավորող կամ վերահսկիչ հաստատությո՞ւնը:

Պարզեք թեսթն իրականացնողը մինչ այդ քանի՞ անգամ է նման հետազոտություններ անցկացրել, թափանցի՞կ կառույց է, հասարակությունից չի՞ թաքցրել տեղեկությունները՝ հատկապես ԱԷԿ-ի միջադեպերին վերաբերողները: Կարևոր հարց. ո՞վ է ֆինանսավորել թեսթի իրականացումը:

Ձայնագրեք ձեր զրույցները: Սղագրեք դրանք: Որոշեք՝ որոնք են տեղեկատվության «մութ» հատվածները:

Մտածեք, թե ով կարող է լինել տեղեկությունների աղբյուր: Նրանց ու ձեր փորձագետների մասին իմացեք ավելին: Ձեզ հետ շփվելու/չշփվելու ի՞նչ դրդապատճառներ կարող են ունենալ: Էլ ո՞վ կարող է հաստատել նրանց տեղեկությունները: Կա՞ն, արդյոք, տեղեկությունները հաստատող փաստաթղթեր:

Եթե հաջողվել է գտնել ձեզ հետ համագործակցության պատրաստ մի քանի փորձագետի, պարզեք արդյոք նրանք համակարծիք են: Եթե ոչ, կազմակերպեք նրանց դեմ առ դեմ կամ հեռակա բանավեճ:Դուք հնարավորություն կունենաք ներկայացնելու մի քանի կարծիք: Ինչքան իրարից անկախ աղբյուրներ լինեն, այնքան՝ ավելի լավ:

Նրանց կարծիքները կարող են չհամապատասխանել իրականությանը: Խնդրի նկատմամբ որևէ մեկի տեսակետը դեռ ճշմարտությունը չէ: Ճշմարտության հիմքը փաստերն են:

Ստուգեք ձեր պատմության բոլոր փաստերը: Ազատվեք նախնական հիպոթեզներից: Փորձեք գտնել անմիջականորեն ստուգում անցկացրած մասնագետներին: Եթե դա հաջողվեց, նրանց հետ համբերատար շփվեք, ձգտեք ստանալ վկայություններ բառացիորեն ամեն ինչի մասին՝ սկսած ստուգումների ընթացքում նրանց կենցաղից, աշխատավարձից մինչև տեխնիկական չափորոշիչներն ու անձնական լուսանկարները: Դրանք կարող են ոչ միայն հետաքրքիր, այլև ձեր պատմության համար կարևոր լինել:

Դիտարկենք լիտվական մի հետաքննություն, որը մոտ է ներկայացված օրինակին:

Համաձայն Եվրոպական Միությանը Լիտվայի անդամագրվելու պայմանագրով նախատեսված պարտավորություններին՝ 2009 թվականի դեկտեմբերի 31-ին Ignalina ատոմակայանը (հետագա տեքստում՝ ԻԱԷԿ կամ ձեռնարկություն) դադարեցրեց էլեկտրաէներգիայի արտադրությունը: Էներգիա արտադրողից այն վերածվեց իր գործունեությունը դադարեցնող ձեռնարկության, սակայն պահպանեց միջուկային էներգետիկայի օբյեկտ շահագործող կազմակերպության կարգավիճակը:

Ատոմակայանի ՌԲՄԿ-1500 (էլեկտրական հզորությունը-1500 Մվտ) տիպի երկու ռեակտորները կանգնեցվեցին (առաջին բլոկը՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ին, երկրորդը՝ 2009 թվականի դեկտեմբերի 31-ին), սկսվեց ԱԷԿ-ի ապամոնտաժումը:

2010 թվականի հունվարի 1-ից ձեռնարկության հիմնական նպա-

տակն էր անվտանգ, ժամանակին և ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով, իրականացնել աշխարհում աննախադեպ մի նախագիծ (պահպանելով հասարակության աջակցությունը ատոմային էներգետիկային)՝շահագործումից հանել ՌԲՄԿ տիպի ռեակտորով ատոմակայանը:

Այդ աշխատանքն իրականացնելու համար հայտարարված միջազգային մրցույթը շահեց NUKEM Technologies ընկերությունը (կապալառու):

Նախագիծն իրականացնելիս ի հայտ եկան մի քանի կոնկրետ խնդիրներ: Աշխատանքների գրաֆիկը խախտվեց, որոշ օբյեկտների շահագործումը 2-4 տարի ուշացավ:

Եվրոպական հանձնաժողովը (նախագծի հիմնական դոնորը) քննադատում էր լիտվական կառավարությանը՝ նման ծավալի նախագծի աշխատանքը համակարգել չկարողանալու համար:

Լիտվական կառավարությունը ժամկետների խախտման համար մեղադրում էր կապալառուին: Լիտվայի էներգետիկայի նախարարը ուղղակի հայտարարեց, որ կապալառուի մեղքով «կորել է» 300 մլն. եվրո:

Միևնույն ժամանակ NUKEM Technologies-ը պատճառաբանում էր, թե ընկերության կատարած աշխատանքներն աշխարհում նախադեպ չունեն: Կապալառուն նաև նշում էր, որ ռեակտորներում և հովացնող ավազաններում իրավիճակի մասին լիտվական կողմից ստացված փաստաթղթերը իրականությանը չէին համապատասխանում: NUKEM Technologies-ն ասում էր, որ օգտագործված միջուկային վառելիքով կասետները դեֆորմացված վիճակում են և հարկ է դրանք բերել կոնդիցիայի, դա ենթադրում էր նոր նախագծում, սերտիֆիկացիա և այլն:

Տրված տեղեկությունները ստուգելու քիչ հնարավորություններ կային: Դրանց մի մասը «գաղտնի» գրիֆով էին, մյուս մասը՝ խորհրդապահական էր՝ ըստ կառավարության և կապալառուի միջև պայմանավորվածության: Վեճի որոշ առարկաներ ռադիոակտիվ միջավայրում էին, որտեղ հնարավոր չէր մտնել և ստուգել առանց լրագրողի առողջությունը վնասելու: Մամուլում տեղեկությունների հոսքը սպառնում էր վերածվել բազմամիլիոնանոց դատական հայցի:

Այսուհանդերձ, ինձ հաջողվեց լուծել հետաքննության մի քանի խնդիրներ:

Աշխատելով տվյալների բազայի հետ՝ բավականին արագ հաջողվեց պարզել, որ աշխատանքները, որոնք կատարում էր NUKEM Technologies-ը այդ ընկերության համար աննախադեպ չէին, ինչպես իրենք էին հայ-

տարարում: NUKEM Technologies-ը աշխատել էր Չեռնոբիլի ԱԷԿ-ի (Ուկրաինա) փակման նախագծում: Եվ, ինչպես պարզվեց, ոչ միշտ՝ հաջող: Չեռնոբիլում ընկերության տեղադրած թանկարժեք սարքավորումը խափանումներով էր աշխատում, պարբերաբար նորոգվում էր և պարապուրդի մատնվում: Համացանցում անգամ հոլովակ կար, որում Nukem Technologies-ի ղեկավարներից մեկը պաշտոնատար անձին կաշառք էր առաջարկում (պայմանագրի արժեքի 15 տոկոսի չափով):

Մենք հասկացանք, որ NUKEM Technologies-ի հայտարարությունները պետք է վերապահումով ընդունել:

Առավել դժվար էր ստուգել, թե իսկապես օգտագործված միջուկային վառելիքի վիճակն ավելի վատ է, քան ներկայացված է լիտվական կողմի տեղեկատվական բրոշյուրում:

Մի քանի շաբաթ անց, երբ այդ հարցը հետաքննելու մեր էնտուզիազմն արդեն մարում էր, մեզ հաջողվեց գտնել օպերատորին, որը հատուկ սարքավորումներով լուսանկարել էր հովացման ավազանների ներսը:

Ստացանք լուսանկարներ, որոնցում հստակ երևում էին, որ ավազաններում պահպանվող վառելիքային կասետները դեֆորմացված էին: Այսինքն՝ ավազանից դրանք հանելն ու երկար պահպանման կոնտեյներների մեջ տեղադրելը տեխնոլոգիական լուծման նոր մարտահրավեր էր ենթադրում, և բնականաբար՝ լրացուցիչ ֆինանսավորում:

Հավաքելով բոլոր փաստերը՝ դուք պետք է ազնվորեն պատասխանեք. «ունե՞ք արդյոք, ինչ-որ նորություն» հարցին: Հնարավոր է ձեր հետաքննությունը ոչ մի նոր բան չհայտնաբերի:

Եթե ձեր պատմության համար կարևոր որևէ տեղեկություն չեք ստացել, սակայն աղբյուրները պնդում են, թե այդպիսին կա, բայց գաղտնի է պահվում, կարող եք դիմել դատարան: Այդպես վարվեցին The Boston Globe-ի լրագրողները, որոնք հետաքննում էին մանկապղծության փաստերը կաթոլիկ եկեղեցում:

Եթե հնարավոր է, պատմությունը պատմեք մեկ մարդու միջոցով: Շարադրեք հոդվածի առաջին պարբերությունը այնպես, որ լսարանը ցանկանա կարդալ այն ամբողջությամբ:

Նշումների համար

ՔԵՄԱԼ ԳՅՈՔԹԱՇ

ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Cumhuriyet օրաթերթի լրագրող է: Թղթակցել է Radikal, Sabah, Vatan ve Milliyet պարբերականներին՝ լուսաբանելով դատական և քաղաքական թեմաներ: Հեռուստահաղորդումներ է պատրաստել IMC հեռուստաընկերության համար, որը վերջերս Թուրքիայում փակված լրատվամիջոցների թվում է: Անկարայի համալսարանի Հաղորդակցության ֆակուլտետի ասպիրանտ է և հրավիրյալ դասախոս: «Հրանտ Դինքի սպանությունը. մեդիա, արդարադատություն, պետություն» գրքի հեղինակն է:

Երբ 2002 թվականին «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) եկավ իշխանության, մամուլի շրջանում որոշակի կասկածներ առաջացան: Այն ստեղծել էին իսլամիստական Fazilet (առաքինություն) կուսակցությունից դուրս եկած կադրերը՝ իրենց մեջ ներառելով կենտրոնամետ և աջակողմյան ուժերին:

Սկզբնական շրջանում «Արդարություն և զարգացում» կուսակցությունը ժխտում էր իսլամական ինքնությունը՝ ասելով, թե հանել է Fazilet-ի գաղափարախոսությունը խորհրդանշող «ազգայնական տեսիլք շապիկը»: Կուսակցությունն իրեն անվանում էր պահպանողական դեմոկրատական և տնտեսական աջակցություն էր ստանում փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներից, ինչպես նաև իր համակիրների՝ Անատոլիայում սփռված կապիտալից:

Իշխանության առաջին տարիներին ԵՄ անդամակցությանն ուղղված ժողովրդավարական օրենքները և՛ ներսում, և՛ դրսում որոշակի ազդեցություն ունեցան: Եվրոպայի և արևմտյան ինտելեկտուալների մեծ օժանդակությունը ստացած ԱԶԿ-ն, որքան էլ մամուլի հետ խնդրահարույց հարաբերություններ ուներ, ԶԼՄ-ների վրա ճնշումներ չէր գործադրում: Սակայն դեռ մինչև իշխանության գալը կուսակցությունը աջակցում էր համակիր բիզնեսմենների, որպեսզի վերջինները հետագայում օգնեն իրեն կառավարական մեդիա ստեղծելու գործում և դառնան որոշ մամուլի կենտրոնների սեփականատերեր:

Թույլ վարչարարությունը հաղթահարելու նպատակով ԱԶԿ-ն սերտ համագործակցություն սկսեց գյուլենականների հետ (ներկայումս ԱՄՆ Փենսիլվանիա նահանգում բնակվող իսլամական հասարակական գործիչ Ֆ. Գյուլենի կողմնակիցների ընդհանրական անվանումն է): Երկար ժամանակ ի վեր գյուլենական կառույցի կողմից հատուկ դպրոցներում աճեցված միլիթանները (գաղափարական զինվոր) փորձում էին ներդրվել պետական կառույցներում և միայն ԱԶԿ-ի իշխանության տարիներին նրանց հաջողվեց տեղավորվել բյուրոկրատական և զինվորական շրջանակներում:

2007թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ զինվորականությունը պնդեց, որ աշխարհիկ նախագահ է ցանկանում, ԱԶԿ-ն կարողացավ օրենքը փոփոխել և ժողովրդի ուղղակի քվեի միջոցով նախագահ ընտրել: Հատկապես դատական և ոստիկանական շրջանակներում գտնվող գյուլենականները, ստանալով քաղաքական աջակցություն, կարողացան դատավարությունների միջոցով չեզոքացնել իրենց ոչնչացնել ձգտող ու զինվորական հեղաշրջումներ ծրագրող որոշակի

անձանց: Սկզբում դատավարություններն ընթանում էին անլեգալ պետական կառույցների և Գլադիոյի դեմ (ՆԱՏՕ-ի երկրներում հատուկ ծառայությունների կողմից ստեղծված ընդհատակյա գաղտնի կազմակերպություններ, որոնք պետք է գործեին հնարավոր պատերազմի դեպքում), սակայն կարճ ժամանակ անց դրանք վերածվեցին ընդդիմության որսի: Իշխանության կողմից քուրդ քաղաքական գործիչների, ուսանողների, սոցիալիստների ու լրագրողների նկատմամբ իրագործած բռնություններն ընկալվում էին որպես դատավարության արդյունք:

Գյուլենականներին և կառավարությանը պատկանող մամուլը դատավարությունների ժամանակ շատ կարևոր դեր էր խաղում: Սրան կարող ենք անվանել օպերացիաներին նվիրված լրագրություն: Նրանց հրապարակումները հնարավոր չէ անվանել հետաքննական լրագրություն: Որոշակի աղբյուրներից լուսանկարներ, ձայնագրություններ ստանալով՝ նրանք հրապարակում էին դրանք, փորձում էին ձևավորել հասարակական կարծիք և փոփոխել իրադարձությունների ժողովրդական ընկալումը:

Այս ժամանակահատվածում կրկին ավելացավ իշխանության ճնշումն այլ թերթերի նկատմամբ: Երկրի խոշորագույն մեդիա կենտրոններից մեկը՝ Dogan Holding-ը պատժվեց 2,600 միլիարդ թուրքական լիրայի չափով հարկային տուգանքով: Նման միջոցներով իշխանությունն ուղղակիորեն հասկացնում էր, որ մամուլն ու հեռուստատեսությունն այլևս իրավունք չունեն քննադատել իրենց: Dogan Holding-ի այս հարկային պատիժը նաև զգուշացում էր մյուս թերթերին: Մեդիայի սեփականատերերը, որոնք նաև էներգետիկայի, ֆինանսների, շինարարության, մեքենաշինության, տուրիզմի, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության և այլ ոլորտներում էին սեփականատեր, չէին ցանկանում փչացնել հարաբերություններն իշխանությունների հետ: Իշխանություններին դատապարտելու համար զբաղեցրած պաշտոններից հեռացվում էին լրագրողներ և հեռուստատեսության աշխատակիցներ:

Կառավարությունում կային այնպիսի գործիչներ, որոնց պարտականությունը մամուլին հետևելն էր: Նրանք կարողանում էին երկու րոպեում փոխել տալ նյութի վերնագիրն ու թեման: Երբ գյուլենականները պայքարի մեջ մտան իշխանության հետ, նրանք հրապարակեցին վարչապետի, նախարարների, նույնիսկ քաղաքապետերի ձայնագրությունները, որոնք զանգահարում էին թերթի խմբագրին կամ լրագրողներին և թելադրում՝ ինչպես պատրաստել նյութը կամ՝ որ լրագրողին է հարկավոր ազատել աշխատանքից:

Այս առումով միջանկյալ օղակ էր հանդիսանում Պետական գովազդի հիմնարկը: Թերթերի հիմնական եկամուտը գովազդից էր ստացվում, և գովազդի միջոցով ևս կարելի էր ճնշման ենթարկել մամուլը:

2016թ-ի հուլիսի 15-ի հեղաշրջման փորձից հետո երկրում հայտարարվեց արտակարգ դրություն և մամուլի վրա ճնշումն ավելի ուժեղացավ: Բացի գյուլենական մամուլից, փակվեցին քրդական ուղղվածություն ունեցող թերթերը, լրագրերը և հեռուստաընկերությունները: 1923թ. հանրապետության հռչակման հետ միաժամանակ հիմնադրված և այն օրերի վարչակարգից իր անունը ստացած Cumhuriyet (Հանրապետություն) թերթն իր դեմ ուղղված տարբեր գործողությունների թիրախ դարձավ: Շատ լրագրողներ դատապարտվեցին տարբեր ահաբեկչական խմբավորումների հետ համագործակցության մեղադրանքով:

Մարդու իրավունքների և ժողովրդավարության ոտնահարման, կառավարության բռնապետական ցանկությունների, քրդական հարցի, խաղաղության բանակցությունների, զինադադարի մասին նյութերը, այլընտրանքային ճանապարհներ ցույց տվող վերլուծություններն ընկալվում են որպես ահաբեկչական հոդվածներ: Նույնիսկ այն վերլուծությունները, որոնց մեջ չկա որևէ լուրջ քննադատություն, մեղադրվում են սուբլիմենտար ուղերձ պարունակելու պատրվակով: 2016թ. դեկտեմբերի 5-ի դրությամբ, թուրքական բանտերում PKK-ի (Քրդական բանվորական կուսակցություն) և ձախակողմյան ուժերի հետ համագործակցության համար ձերբակալված է 146 լրագրող: Թուրքիայում թերթեր փակել-չփակելու հարցը սովորաբար դատարաններն են որոշում, սակայն հուլիսի 15-ից հետո այդ որոշումն իր ձեռքը վերցրեց նախարարի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովը: Այդ ընթացքում փակվել են 63 թերթ, 28 հեռուստաալիք, 5 լրատվական գործակալություն, 20 լրագիր, 21 ռադիո, 28 հրատարակչություն:

Այսպիսի ճնշման պայմաններում լրագրությունը ստիպված անձնատուր եղավ իշխանություններին, լիովին վերացվեց արդեն իսկ բավականին խնդրահարույց խմբագրական անկախությունը: Այն լրագրողները, որոնք իշխանություններին անցանկալի լուրեր էին պատրաստում, ազատվեցին աշխատանքից: Լրատվամիջոցների գլխավոր պաշտոններում այլևս հնարավոր չէ տեսնել մարդկանց, որոնք անցանկալի են իշխանությունների համար:

Մեդիա աշխատողներից շատերը սկսել են մտածել պետական այրերի պես: «Թրանսփարենսի ինթերնեշնլ»-ի կողմից իրականացված մի հետազոտության մեջ լրագրողներին հարցրել են. «Ձեր կարծիքով, ներ-

քոհիշյալ թեմաներից որո՞նց կարող ենք անվանել կարմիր գծեր լրագրողի համար»: Հարցման մասնակիցները պատասխանել են՝ ազգային անվտանգություն, կրոնական, բարոյական ավանդույթներ, հավատ, անձնական կյանքի և տվյալների բացահայտում, և միայն ամենավերջում նշել են ժողովրդի շահը:

Լրագրությունը պետք է կենտրոնացած լինի հանրային շահի վրա, սակայն ինչպես տեսնում ենք այս օրինակից, այն վերջին տեղում է, ինչը շատ լավ բնորոշում է, թե Թուրքիայում լրագրությունն ինչպես է ճնշվում:

Նյութական առումով անապահով լրագրողներն այս պահին չեն կարողանում տաքու դարձած հարցերի մասին լուրեր պատրաստել: Մարդու իրավունքների ոտնահարումների, կառավարության ավտորիտար որոշումների, կոռուպցիայի մասին նյութեր պատրաստելը Թուրքիայում այլևս հնարավոր չէ:

Շատ քիչ լրագրողներ կան, որոնք կարողանում են ընդդիմանալ ճնշումներին և պատրաստել նյութեր, որոնք կարևոր են համարում: Նրանք մեծ ռիսկերի են դիմագրավում: Լրագրողը պետք է նկատի ունենա, որ կարող է բանտ գնալ, իսկ թերթը պետք է հաշվի առնի փակման հնարավորությունը և գործունեության դադարեցումը: Այս իրավիճակում մի շարք փաստաթղթեր, որոնք պետք է հրապարակվեն, մնում են լրագրողների դարակներում և սպասում են այն անհայտ օրվան, երբ կկարողանան ներկայացվել հանրությանը:

«Թրանսփարենսի ինթերնեշնլի» նույն հետազոտության մեջ Թուրքիայի լրագրողներին հարցրել են. «Որո՞նք են հետաքննական լրագրության ամենամեծ ռիսկերը»: Նրանք պատասխանել են՝ տեղական և միջազգային քաղաքական ճնշումները, գործը կորցնելու վախը, նոր աշխատանք գտնելու անհնարինությունը, խմբագրական ճնշումները, գործունեության ընթացքում սպառնալիքներ ստանալը, մեդիայի և կապիտալի փոխկապակցվածությունը, գրաքննությունը, աղբյուրներին հասնելու դժվարությունը, դատական խնդիրները և այլն:

Վերջին հեղաշրջման փորձից հետո Թուրքիայում ոչ միայն պաշտոնական աղբյուրներից տեղեկություններ ստանալը, այլև անկախ թեմաների շուրջ լրատվության աղբյուր գտնելը բավականին դժվարացել է: Երբ մարդիկ վստահ են, որ իրենց բոլոր կապերը, գրածները վերահսկվում են, նրանք վախենում են իրենց ունեցած տեղեկությունը հայտնել լրագրողին, իսկ հետաքննող լրագրողները չեն կարողանում շատ կարևոր փաստաթղթեր, տեղեկություններ հրապարակել, քանի որ դատական համակարգը անկախ չէ, երկրում առկա չէ առողջ քննադա-

տական միջավայր, հասարակությունը բևեռացված է, մամուլը չի կարողանում հասանելի լինել ժողովրդին, և լրագրողը չի կարողանում լիարժեքորեն զբաղվել իր գործով:

Իշխանությանը պատկանող թերթերի և այլ լրատվական կազմակերպությունների մեծությունը, պետական հեռուստաալիքների և Anadolu լրատվական գործակալության (համարվում է անկախ լրատվամիջոց, սակայն իրականացրել և իրականացնում է պետական քաղաքականություն) իշխանություններին աջակցելը թույլ չեն տալիս, որ սկանդալներ, հանցանքներ բացահայտող նյութերը հասնեն ընթերցողին: Իսկ երբ թերթը նման նյութեր տպագրելու խիզախություն է ունենում, նրա նկատմամբ շատ ուժեղ հակագովազդ է սկսվում, և լրատվամիջոցը բարոյապես ստորացվում է: Երկրի հարավ-արևելքում շարունակվող պատերազմի մասին նյութեր ևս հնարավոր չէ գտնել մամուլում: Այդ տարածքներից աղբյուրների հետ կապ ունեցող թերթերը փակ են, և թղթակիցները, մարդու իրավունքների խախտման օրինակներ ունենալով հանդերձ, չեն կարողանում հրապարակել դրանք:

Լրագրողների գործը ռիսկային է դարձնում նաև այն հանգամանքը, որ դատական համակարգը ճշմարտության կողքին չէ:

ՍԿԻՐՄԱՆՏԱՍ ՄԱԼԻՆԱՈՒՍԿԱՍ

ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՎԵՑ 15MIN.LT ԲՐԵՆԴԸ

Աշխատում է լիտվական 15min.lt լրատվական կայքում, որը հայտնի է որպես հետաքննական և բացատրական լրագրության հարթակ: Եղել է «Պանամայի փաստաթղթերի» հետաքննող թիմի պաշտոնական գործընկերը: Աշխատել է լիտվական տարբեր լրատվամիջոցներում: Վերջին տարիներին ներգրավված է եղել Լիտվայում հնչեղություն ստացած հետաքննություններում, լուսաբանում է հանրային ֆինանսների, կոռուպցիայի, հարկերի ոլորտները:

Եկեք սկսենք հակիրճ ներկայացումից: Ես Սկիրմանտաս Մալինաուսկասն եմ (իսկապես դժվար հիշվող անուն է), լիտվացի լրագրող: Վերջին 4 տարվա ընթացքում աշխատում եմ 15min.lt (15 րոպեանոց հետաքննություններ) լրատվական կայքի համար: Լրագրողական հետաքննությունների բաժնի աշխատակից եմ:

Այժմ մենք 5 լրագրողներ ենք: Աշխատել ենք Սիրիայում, Ուկրաինայում Մայդանի և Դոնբասի պատերազմի ժամանակ, հետևել ենք փախստականներին և մասնակցել փրկարարական առաքելությունների: Վերջին երկու տարվա ընթացքում գրել ենք բավական ազդեցիկ հոդվածներ Լիտվայում կոռուպցիայի մասին: Մենք պաշտոնապես համագործակցել ենք Պանամայի փաստաթղթերի գործով, որի շրջանակներում հայտնաբերել ենք Լիտվայից Աֆրիկա փողերի լվացման սխեմաներ:

2016-ին սկսել ենք համագործակցել փաստերի ստուգում ապահովող՝ աշխարհի ամենախոշոր կայքի հետ, ինչպիսին Պուլիցերյան մրցանակակիր www.politifact.com-ն է:

Ինչ է լրագրողական հետաքննությունը

Մեր թիմի անդամներից միայն մեկն ունի լրագրության ոլորտում գիտական աստիճան (թիմը, ինչպես նշեցի, 5 հոգանոց է): Օրինակ՝ ես մագիստրոսական աստիճան ունեմ միջազգային իրավունքի բնագավառում: Շուրջ 15 տարի աշխատում եմ որպես լրագրող տարբեր լրագրերում, ռադիոյում, հեռուստատեսությունում, ինտերնետային մեդիայում:

Այս հոդվածում ես չեմ խոսելու լրագրողական աշխատանքի տեսական կողմերի մասին: Ինձ կներեք, եթե իմ մտքերն այնքան էլ ակադեմիական չթվան: Ես կխոսեմ իմ փորձի մասին, թե ինչն է մեզ օգնել ստեղծել ուժեղ բրենդ և շահել տեղեկատվական աղբյուրների և ընթերցողների վստահությունը:

Առաջին հերթին ցանկանում եմ անդրադառնալ նրան, թե ինչ է, ըստ էության, լրագրողական հետաքննությունը: Երբ մեր տեքստերի վրա սկսեցինք կատարել «15 րոպե հետաքննություն» նշումը, մեզ բազմաթիվ հարցեր ուղղեցին, օրինակ՝ արդյո՞ք պատերազմական գոտուց այս լուսաբանումն իրոք հետաքննություն է, արդյո՞ք երրորդ կողմի տրամադրած տեղեկությունների հիման վրա պատրաստված հոդվածը կարող է հետաքննություն համարվել, ինչո՞վ է կոռուպցիայի մասին այս հետաքննական նյութը տարբերվում նույն հարցի շուրջ մեկ այլ տեքստից:

Մենք որոշեցինք հստակեցնել, որ մեզ համար հետաքննությունը

լոկ աղբյուրներից տեղեկություններ վերցնելն ու պարզապես հրապարակելը չէ, այլ այդ տեղեկությունները հայթայթելու, ստուգելու, հնարավորինս շատ տվյալներ օգտագործելու և եզրահանգումներ կատարելու փաստացի աշխատանքը: Ահա, թե ինչ ենք մենք անում:

Մենք մեկնում ենք Սիրիա և ինքներս ենք լուսանկարում ավերված քաղաքները: Մեկնում ենք Դոնբաս և խոսում տեղացիների հետ: Մենք փորձում ենք տեսնել իրադարձությունների բոլոր կողմերը. զինվորների քաջությունը և քաղաքական իշխանության վերին էշելոնների կոռուպցիան: Նույնը վերաբերում է Լիտվայի խնդիրների մասին մեր հոդվածներին: Մենք ունենք տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներ, սակայն հստակեցնում ենք դրանք, ստուգում ենք փաստերը և գնահատում համատեքստը, հնարավորինս խորամուխ ենք լինում տվյալների մեջ, որպեսզի մեր ընթերցողները ստանան ամենաանաչառ տեղեկությունները: Մենք մեդիան իրենց շահերին ծառայեցնող ընկերությունների և անհատների համար տեղեկատվության արտահոսքի հարթակ չենք:

Ամենամեծ որոգայթները

Նախքան հետաքննություններով զբաղվելը մի քանի լուրջ հարցեր կային մեր առջև ծառացած: Առաջինը՝ մենք գործում ենք բավականին փոքր շուկայում: 15min.lt կայքն ունի ամսական մեկ միլիոն այցելու: Նկատի ունեցեք, որ Լիտվայի բնակչությունը 3 միլիոն է:

Արժե՞ արդյոք շատ ժամանակ և միջոցներ տրամադրել մեկ հոդվածի համար. սա լուրջ հարց էր, որին մեր հրատարակիչը պետք է պատասխաներ: Կարո՞ղ եք ապահովել, որպեսզի բարձր որակավորմամբ անձը տևական ժամանակ աշխատի մեկ խնդրի շուրջ:

Երկրորդ հարցն էր՝ ի՞նչ հմտություններ են անհրաժեշտ լավորակ արտադրանք թողարկելու համար: Ինչպես նշեցի, ոչ ոք լրատվամիջոցներին չի արգելում բրենդավորել որևէ հոդված որպես լրագրողական հետաքննություն: Մենք Լիտվայում վատ փորձ ենք ունեցել, երբ նույնիսկ ակնհայտ կողմնակալ հոդվածներն ընթերցողներին ներկայացվել են որպես լրագրողական հետաքննություններ:

Երրորդ հարցը՝ աշխատանքային ի՞նչ մեթոդներ ենք կիրառում: Սա նույնպես կարևոր է: Մարդիկ հաճախ կարծում են, թե լրագրողական հետաքննությունը, ըստ էության, նույնն է, ինչ ցանկացած այլ հոդված գրելը: Պարզապես ավելի շատ ժամանակ ես ծախսում և ավելի մեծ տեքստ գրում: Բոլորովին էլ այդպես չէ:

Չորրորդ հարցը՝ ինչպե՞ս ենք մենք ներկայացնում մեր հետաքննությունը: Նկատե՞լ եք, որ ես միշտ օգտագործում եմ «հոդված» բառը:

Դա սովորական է ինձ համար, քանի որ ես շատ եմ գրում, սակայն մենք շատ արագ հասկացանք, որ միայն տեքստը կամ նույնիսկ լուսանկարով տեքստը մեր օրերում և դարաշրջանում բավական չեն:

Արդյոք իմաստ ունի

Իմ անձնական տեսանկյունից կարճ պատասխանն է՝ «այո»: Գործարարների տեսանկյունից՝ «նայած»: Ժամանակը փող է, իսկ լրագրողական հետաքննությունները երկար ժամանակ են պահանջում: Սա կանոն է: Թերևս, դա է հիմնական պատճառը, որ մենք խոսում ենք երկարաշունչ տեքստերի դժվար ժամանակների մասին: Մարդիկ պարզապես դրա ժամանակը չունեն: Թե՞ ունեն:

Ինչ վերաբերում է ինտերնետային էջերի դիտումներին, ապա բարձրորակ և երկար տեքստը չի կարող մրցակցել սեքսի, սպորտի կամ եղանակի մասին հինգ կարճ հոդվածների հետ: Սա էլ կանոն է: Սակայն վստահաբար կարող եմ ասել, որ մենք հրատարակել ենք բազմաթիվ հետաքննական նյութեր, որոնք լավագույնն են եղել՝ դատելով մեր կայքի դիտումներից:

Երբ աշխատում եք մեծ շուկայում, մեկ հանրամատչելի նյութը կարող է այնպիսի իսկայական թրաֆիկ առաջացնել և արձագանք գտնել այլ լրատվամիջոցներում, որ այլևս հարց չծագի՝ արդյո՞ք իմաստ ունի:

Եթե աշխատում եք ավելի փոքր շուկայում, ստիպված եք հաշվարկել՝ ի՞նչ եք շահում նոր այցելուների, հեղինակության, ընկերությունների առումով, ովքեր ցանկություն ունեն գովազդներ տեղադրել, քանի որ ձեր հարթակը նրանց դուր է գալիս:

Այլ խնդիր է, թե ինչ գին են երբեմն ունենում հետաքննական նյութերը: Դուք կարող եք կորցնել մեծ ընկերություններ, որոնք այս պահին ձեր հաճախորդներն են: Երբ մենք հոդված գրեցինք Լիտվայի ամենահարուստ մարդու՝ Ներիյուս Նումավիչիուսի մասին (նրան է պատկանում Maxima խանութների ամենամեծ ցանցը Մերձբալթյան պետություններում, և նա գործարարությամբ է զբաղվում աշխարհի այլ երկրներում), մեր գովազդային բաժինը մի ակնթարթում կորցրեց ամենախոշոր հաճախորդներից մեկին: Մյուս կողմից՝ մենք ցույց տվեցինք, որ չենք վախենում դրանից և ծնկի չենք գա այդպիսի ճնշման ազդեցությամբ: Մեկ տարի անց Maxima-ի գովազդները վերադարձան 15 min:

Անհրաժեշտ հմտությունները

Սա նույնպես շատ հետաքրքիր թեմա է: Անձամբ ես ճանաչում էի հրաշալի լրագրողների, որոնք հետաքննական ուժեղ բաժիններ ստեղծելու փորձեր են կատարել, սակայն ձախողվել են: Ինչո՞ւ: Պատճառներից մեկը գրասենյակի ներսում մրցակցությունն է, ճչան վերնագրերով նյութեր գրելը, ընդ որում՝ նշանակություն չունի, թե ինչի մասին:

Երբ օգտվում եք տեղեկատվական նույն աղբյուրներից, լուսաբանում եք հանրային կյանքի նույն ոլորտները, երբ ձեզ անընդհատ համեմատում են կողքի աշխատասեղանի մոտ նստած մեկ այլ լրագրողի հետ, դա նյարդայնացնում է:

Մենք որոշեցինք խուսափել դրանից՝ ստեղծելով տարբեր ոլորտներում աշխատող պրոֆեսիոնալների թիմ: Ես լուսաբանում էի բիզնեսը, ուստի այժմ հիմնականում աշխատում եմ կոռուպցիայի, տենդերների, անշարժ գույքի և ֆինանսական խարդախության, Պոնցի (ponzi) սխեմաների և նմանօրինակ թեմաների շուրջ:

Դովիդաս Պանցերովասը լուսաբանում է ազգային անվտանգության խնդիրները: Նա իր աշխատանքի ընթացքում հաղորդումներ է տվել աշխարհի տարբեր թեժ կետերից:

Սարունաս Չերնիաուսկասը հիմնականում աշխատում է տվյալների լրագրության ոլորտում: Նա միջազգային տվյալների մեր հիմնական մատակարարողն է: Նա նաև մեզ ներկայացնում է միջազգային կազմակերպություններում և ունի բազմաթիվ միջազգային կապեր:

Դովիլե Ցաբլոնսկայտեն լուսաբանում է առողջապահության, կրթության, մշակույթի, կրոնի և այլ հարցեր:

Վիդմանտաս Բալկունասը մրցանակակիր լուսանկարիչ է և աշխատում է բոլորիս հետ:

Այս մոդելը ստեղծում է համագործակցություն և պաշտպանում մեզ միմյանց ոտք տրորելուց:

Մեր մեթոդները

Կարելի է մի ամբողջ գիրք գրել այն մեթոդաբանության մասին, թե ինչպես զբաղվել հետաքննական լրագրությամբ: Ես ընդամենը մի քանի կետ նշեցի: Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ համացանցը տրամադրում է հսկայածավալ բաց տվյալներ: Պարզապես սովո-

րեք ճիշտ օգտագործել տվյալների շտեմարանները, տեղեկատվական արխիվները, սոցիալական ցանցերը և այլն:

Այնուհանդերձ, ես համարում եմ, որ տեղեկությունների մեր հիմնական աղբյուրները տարբեր հաստատություններում աշխատող ազնիվ մարդիկ են: Ցանկացած լրագրող ժամանակի հետ ստեղծում է իր կապերի տվյալների շտեմարանը, որը պետք է փայփայել: Մեզ մոտ կատակում ենք՝ եթե չգիտեք ինչի մասին գրել, թեմա մի փնտրեք, բացեք ձեր կոնտակտների ցանկը և զանգահարեք մարդկանց, ում հետ խոսել եք նախկինում: Շատ հաճախ դուք կստանաք այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են լուրջ նյութի աղբյուր դառնալ:

Ի դեպ, մենք ստանում ենք բազմաթիվ էլեկտրոնային նամակներ, հեռախոսազանգեր և նույնիսկ սովորական նամակներ՝ թեմաների առաջարկներով: Դրանցից շատերը ուղարկում ենք այլ բաժիններ: Հաճելի է նման «խնդիր» ունենալը:

Մատուցում

Երկար ժամանակ կարծում էի, որ ամենակարևորը տեքստն է և գուցե տեքստին կից նաև մի քանի նկարներ, սակայն ոչ ավելին: Այժմ ես միանգամայն այլ կարծիքի եմ: Մենք շատ հնարավորություններ ենք ունեցել տեսնելու նյութի մատուցման ազդեցությունը:

Երբ մենք սկսեցինք ոչ միայն հոդվածներ գրել, այլև մուլտիմեդիա նախագծեր իրականացնել, անմիջապես զգացինք ընթերցողների չափազանց դրական արձագանքը: Սա իր տեսակի մեջ առաջինն էր՝ (http://bit.ly/2ci0ht6):

Դրանից հետո նման նյութեր շատ ենք պատրաստել: Տեսանյութերը, ինֆոգրաֆիկաները, պատկերազարդումները, լրացուցիչ բացատրականները դարձել են մեր հետաքննության անբաժանելի մասը: Նման տեսանյութերից մեկը, որը նկարահանել ենք Սիրիայում կարող եք տեսնել այստեղ՝ (http://bit.ly/2knUfdW):

Տեխնոլոգիաները փոխվում են, և մենք պետք է փոխվենք դրանց հետ: Հաճախ մենք աշխատում ենք լուսաբանման առումով շատ դժվար թեմաների շուրջ, ուստի պետք է կիրառվեն լուսաբանելու բոլոր միջոցները:

ԿՈՐՆԵԼԻԱ ԿՈՋՈՆԱԿ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՍՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՐՇԱՎՆԵՐԻՆ

Մոլդովայի Հետաքննական լրագրության կենտրոնի նախագահն է, «Ազատություն» ռադիոկայանի «Քո իրավունքը» հաղորդաշարի հեղինակը: Հետաքննական լրագրության, հաղորդակցության և հակակոռուպցիոն թեմաներով դասընթացավար է: Անդամակցում է Հետաքննող լրագրողների Հարավարևելյան եվրոպայի ցանցին, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի մոլդովական գրասենյակի խորհրդի անդամ է: Կոռուպցիայի թեմայով նրա հետաքննությունները բազմաթիվ մրցանակների են արժանացել:

Խարդախության սխեմաները Մոլդովայի հանրապետությունում, ինչպես կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող այլ երկրներում, սկսվում են ընտրարշավներից: Նախընտրական քարոզարշավը որոշ խմբերի համար կեղտոտ փողերի լվացման և օրինականացման բարենպաստ ժամանակաշրջան է: Ինչպե՞ս: Վճարելով ընտրական որոշ գործողությունների համար, օրինակ՝ վարձատրություն ընտրարշավում ներգրավված կամավորներին, նախքան ընտրարշավների մեկնարկը տեղադրված գովազդային վահանակների ֆինանսավորում, ընտրական համերգներ, որոնք չեն հայտարարագրվել քաղաքական կուսակցությունների ֆինանսական հաշվետվություններում և այլն: Առավել հաճախ դրանք չեն վճարվում օրինական աղբյուրներից և չեն ներառվում քաղաքական կուսակցությունների ֆոնդերում:

Լրագրողական հետաքննության համար անհրաժեշտ շատ մանրամասներ կարելի է գտնել քաղաքական կուսակցությունների ֆինանսական փաստաթղթերում՝ թեկնածուների կողմից Արդարադատության նախարարություն կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողով (www.cec.md) ներկայացվող պարտադիր հաշվետվություններից:

Մենք ստուգում ենք կուսակցությունների պաշտոնական դոնորների մասին տեղեկությունները՝ աշխատանք, բնակության վայր, տարիք և նվիրատվության գումարի չափ:

Առաջադրված թեկնածուների ֆինանսական հաշվետվություններում հանդիպում ենք թոշակառուների, գործազուրկների կամ ցածր աշխատավարձ ստացող պետական ծառայողների, որոնք մեծ գումարներ են նվիրաբերում: Կան որոշ մասնավոր ընկերությունների ներկայացուցիչներ, որոնց կատարած նվիրատվությունները նույնպես զգալի են:

Ինչ վերաբերում է պետական ծառայողներին, ապա մենք կարող ենք ստուգել հանրային հաստատությունների հաշվետվություններում զետեղված տեղեկությունները, որոնք, որպես կանոն, կարելի է գտնել ինտերնետային կայքերում: Հնարավոր է լրագրողական հարցումների միջոցով պարզել նաև, թե արդյոք նրանք նախքան քարոզարշավը նպաստներ կամ ֆինանսական օգնություն են ստացել: Մոլդովայում մենք հայտնաբերել ենք դեպքեր, երբ կոնկրետ անձինք (նրանցից ոմանք աշխատում էին արտերկրում) պետությունից ստացած ֆինանսական օգնությունն օգտագործել են թեկնածուի ընտրարշավի համար:

Եկամուտներից մեծ նվիրատվություններ

Վերջին 10 տարիների ընտրարշավների ժամանակ մենք ուսումնասիրել ենք պետական պաշտոնյաների և ընտրացուցակներում ընդգրկված թեկնածուների նվիրատվությունները կուսակցություններին: Դրանք համեմատելով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված՝ գույքի և եկամուտների մասին հայտարարագրերի հետ, պարզել ենք, որ որոշ պաշտոնյաներ այնքան մեծահոգի են եղել, որ նվիրաբերել են իրենց 2 տարվա ընտանեկան բյուջեից ավելի մեծ գումարներ: Որոշ դեպքերում 700.000-ից 1 մլն. լեյ (30-50 հազար ԱՄՆ դոլար) նվիրաբերած անձինք բարձր պաշտոններ են ստացել պետական համակարգում: Օրինակ՝ Լիբերալ կուսակցության առաջնորդ Միհայ Գիմպուն 2010 թվականի ընտրարշավի ժամանակ կատարել էր շուրջ 750 հազար ԱՄՆ դոլարի նվիրատվություն: Դա կրկնակի անգամ գերազանցում է նրա 2 տարվա ընտանեկան բյուջեն: Իսկ երբ նրա կուսակցությունը անցավ խորհրդարան, Գիմպուն ընտրվեց օրենսդիր մարմնի նախագահ, ապա և՝ Մոլդովայի Հանրապետության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար մեկ տարի ժամկետով: Նույն ընտրարշավում Մոլդովայի Լիբերալ դեմոկրատական կուսակցության նախագահ Վլադ Ֆիլատը նույնպես նվիրատվություններ էր կատարել իր կուսակցության օգտին:

Ապօրինի ֆինանսական մեքենայությունների հեղինակները և դրանցում ընդգրկված պաշտոնյաները շատ արագ փոխում են իրենց սխեմաները, երբ դրանք բացահայտվում են հետաքննող լրագրողների կողմից: 2014թ.-ի խորհրդարանական ընտրություններում լրագրողական հետաքննության ուշադրության կենտրոնում հայտնված պաշտոնյաները կատարել են նվիրատվություններ իրենց հայտարարագրած եկամուտների սահմաններում: Մինչդեռ, օրինակ, Սոցիալիստական կուսակցության (որը խորհրդարանական ընտրություններին առաջին անգամ մասնակցող երիտասարդ կուսակցություն էր) դոնորները կատարել են հայտարարագրված եկամուտները գերազանցող նվիրատվություններ: Սակայն երբ նրանք հրաժարվում են մի սխեմայից, ի հայտ է գալիս մեկ այլ սխեմա: 2014թ.-ին մենք բացահայտել ենք դրանցից մեկը՝ կապված պետական գնումների հետ, ինչի մասին կխոսենք ստորև:

Քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում ընդգրկված և անկախ թեկնածուների գույքի վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում՝ http://www.cec.md/index.php?l=ro:

ԿԸՀ ներկայացված գույքի հայտարարագրում թեկնածուները նշում են իրենց ընտանիքի երկու տարվա ընդհանուր եկամուտը և ունեցած գույքը:

Եթե թեկնածուն պետական պաշտոն է զբաղեցրել, ապա նրա գույքի և շահույթի վերաբերյալ հայտարարագրերը մատչելի են Ազգային օրինավորության գործակալության (National Integrity Agency) կայքում՝ www.cni.md: Այնտեղ կա որոնման համակարգ, որտեղ կարող եք մուտքագրել անձի անունը, հայտարարագրի տեսակը (գույքի կամ շահույթի) և տարին, այնուհետև սեղմել «փնտրել» կոճակը:

Էջի ներքևում դուք կգտնեք պահանջված հայտարարագրերը PDF ձևաչափով: Պաշտոնյաների եկամտի վերաբերյալ հայտարարագրերը ստուգելուց հնարավոր է տեսնել նրանց կապը մասնավոր ընկերությունների հետ, որից հետո կարող եք ստուգել պետության հետ այդ ընկերությունների ունեցած առնչությունը:

Պաշտոնյաների գույքի և շահույթի վերաբերյալ հայտարարագրերը մատչելի են www.avere.md կայքում, որը պատկանում է Մոլդովայում գործող ADEPT (Thee Association for Participatory Democracy) անկախ կազմակերպությանը:

Այստեղ կարող եք գտնել պաշտոնյաների գույքի վերաբերյալ հայտարարագրեր՝ պետական պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածի համար: Կարող եք որոնել նաև ըստ անունի: Այս կայքում կգտնեք մի շարք վերլուծություններ և ինֆոգրաֆիկաներ պետական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածում տվյալ պաշտոնյայի գույքի ավելացման մասին, ինչպես նաև՝ գույքի հայտարարագրերում առկա խնդիրների և անհամապատասխանությունների վերաբերյալ:

Այս բոլոր տվյալները կարող են հեշտացնել լրագրողների աշխատանքը կամ կարող են դառնալ առավել ընդգրկուն հետաքննությունների մեկնակետ:

Կադաստրի տվյալների շտեմարանը www.cadastru.md օգտագործվում է՝ ստուգելու, թե երբ է պաշտոնյան բնակարան ձեռք բերել: Այս տվյալների շտեմարանից օգտվելը վճարովի է: Հետաքննական լրագրության կենտրոնը բաժանորդագրված է և օգնում է լրագրողներին օգտվել Կադաստրի տվյալների շտեմարանից: Կադաստրի կայքում կարող եք որոնել կադաստրային համարով կամ գույքի, հողակտորի հասցեով: Այս տվյալների շտեմարանն ընդհանուր տեղեկություններ է տրամադրում շենքի կամ հողակտորի, վաճառքների քանակի, սեփականատերերի մասին: Մենք կարող ենք նաև պարզել՝ արդյո՞ք այն գրավադրված է վարկի դիմաց

(ներառյալ՝ գումար, բանկ, վարկի մարման պայմաններ), կա՞ն դատարանով սահմանված արգելանքներ, և/կամ արդյո՞ք այն առգրավված է: Այս տվյալները կարևոր են լրագրողական հետաքննության համար:

Կուսակցություններին արված նվիրատվությունների մասին մենք տեղեկանում ենք նաև թեկնածուների ֆինանսական հաշվետվություններից: ԿԸՀ-ի կայքում ընտրում եք ընտրություններ բաժինը, հետո՝ ընտրական թեկնածուներ, համապատասխան կուսակցությունը, այնուհետև՝ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվետվության առաջին մասում կգտնեք հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը, այնուհետև նվիրատվություններից ստացված եկամուտները: Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր կուսակցություն ունի մի քանի հաշվետվություն՝ կարճաժամկետ և ամփոփիչ:

Պետական գնումները՝ կուսակցությունների ֆինանսավորման միջոց

2014թ.-ին, երբ մենք ստուգում էինք տարբեր մարդկանց կատարած նվիրատվությունները կուսակցություններին, պարզեցինք, որ շատ նվիրատուներ կան որոշ տնտեսական հիմնարկներից: Դա մեզ համար նոր երևույթ էր, ուստի որոշեցինք ընտրել 50 հազար լեյը (2500 ԱՄՆ դոլար) գերազանցող նվիրատվությունների դեպքերը: Մենք կազմեցինք այն տնտեսական հիմնարկների ցանկը, որոնց ներկայացուցիչները նվիրատվություններ էին կատարել կուսակցություններին: Ստուգեցինք յուրաքանչյուրին ըստ պետռեգիստրի գրանցման համարի՝ տեսնելու կապն այն կուսակցության հետ, որին նրանք մեծ գումարներ էին նվիրաբերել: Տնտեսական հիմնարկների տվյալների շտեմարանը մասամբ է անվճար: Եթե ձեզ անհրաժեշտ է մանրամասն վերլուծություն ընկերության վերաբերյալ, ապա պետք է վճարեք: Մենք այնքան էլ շատ կապեր չգտանք: Այնուհետև որոշեցինք ստուգել, թե արդյոք այս տնտեսական հիմնարկները որևէ առնչություն ունեն պետության հետ կամ արդյոք ունեն պետական գնումների պայմանագրեր: Պետական գնումների ազգային գործակալության www.tender.gov.md կայքը բաց է հանրության համար և ներառում է պետական բոլոր գնումների վերաբերյալ ծավալուն տվյալների շտեմարան: Էջում կարող եք որոնում կատարել ըստ տնտեսական հիմնարկի, պետական հաստատության անվան, պետական գնումների առարկայի, պայմանագրի գործունեության ժամկետի և այլն:

Երբ մենք ստուգեցինք պետական գնումների պայմանագրերը, պարզեցինք, որ բոլոր տնտեսական հիմնարկների ներկայացուցիչնե-

րը նվիրատվություններ են կատարել կուսակցություններին: Մենք դուրս գրեցինք ամբողջ ինֆորմացիան գումարների մասին և որոշ հաշվարկներ կատարեցինք այն պայմանագրերի վերաբերյալ, որոնք կնքված էին պետության հետ վերջին չորս տարիների ընթացքում:

Այնուհետև հաշվարկեցինք նվիրաբերված գումարները. յուրաքանչյուր տնտեսական հիմնարկից նվիրատվություններ էին կատարել ղեկավարները և կառավարիչները: Մենք ստուգեցինք, թե ովքեր են այն պետական հաստատությունների ղեկավարները, որոնց հետ պետական գնումների պայմանագրեր են ձեռք բերել տնտեսական հիմնարկները և որ կուսակցություններն են նպաստել նրանց առաջխաղացմանը: Ստացանք մի զարմանալի պատկեր:

Տնտեսական հիմնարկները, որոնք, օրինակ, գնումների պայմանագրեր ունեին որոշ կուսակցությունների կողմից կառավարվող համայնքապետարանների, ավագանիների հետ, նվիրատվություն էին կատարել այդ կուսակցություններին: Օրինակ, եթե տնտեսական հիմնարկը պայմանագիր էր ձեռք բերել համայնքապետարանից, որի ղեկավարը Դեմոկրատական կուսակցության անդամ էր, նա նվիրատվություններ էր կատարել հենց այդ կուսակցությանը: 2015թ.-ի տեղական ընտրությունների ժամանակ մենք կատարեցինք նույն հետազոտությունները, և պատկերը կրկին զարմացրեց:

Տպավորիչ սխեմաներ արձանագրվեցին իշխանության ղեկին կանգնած և պետական հաստատություններում առավել մեծ ազդեցություն ունեցող կուսակցությունների հետ կապված:

Միլդովայում շատ է խոսվում «օտկատուրիի» մասին. գումարներ, որոնք ուղարկվում են որպես կաշառք պետական պայմանագրերից՝ կազմելով գնման պայմանագրի ընդհանուր գումարի 10-20%-ը: Եթե հաշվում ենք տնտեսական հիմնարկների նվիրատվությունները կուսակցություններին և պայմանագրի գումարը, ապա նվիրատվությունների գումարը հիմնական դեպքերում կազմում է պայմանագրերի արժեքի 10-20%-ը:

Հետևելով այս հաշվարկներին՝ մենք առանձին-առանձին հետաքննեցինք այն գնումները, որոնք մեզ կասկածելի էին թվում: Որոշ դեպքերում մենք պարզեցինք, որ մի շարք տնտեսական հիմնարկներ գումար են ձեռք բերել միանվագ փոխանցմամբ՝ առանց աշխատանքներ կատարելու, իսկ որոշ դեպքերում աշխատանքներն ավարտված չէին: Օրինակ՝ Օրհայ մարզում, որի մարզպետը Դեմոկրատական կուսակցության շնորհիվ էր պաշտոն ստացել, այդ շրջանի բյուջեով ճանապար-

հաշինարարության համար նախատեսված գումարներն ուղղորդվել էին համայնքապետարաններ, որոնց ղեկավարները նույն կուսակցությունից էին: Երբ մենք առանձին ստուգեցինք գնումներից յուրաքանչյուրը, պարզեցինք, որ գումարները հատկացվել էին, մինչդեռ ճանապարհները չէին վերանորոգվել:

2015թ.-ի նախագահական ընտրարշավի ժամանակ ԿԸՀ-ն անձնական տվյալների պաշտպանության պատրվակով թաքցրել էր դոնորների աշխատանքի, ծննդյան թվի մասին տեղեկությունները, ինչը շատ բարդացրեց լրագրողների աշխատանքը:

Սակայն Հետաքննական լրագրության կենտրոնը հետաքննություն իրականացրեց, քանի որ ուներ նախկին ընտրարշավներից ստեղծած դոնորների տվյալների մատչելի շտեմարան:

Այս ընտրարշավում մենք բացահայտեցինք մեկ այլ սխեմա. ընտրական թեկնածուների գումարների երկու երրորդը ծախսվել էր գովազդ տեղադրելու համար այն հեռուստաընկերություններում, որոնք պատկանում էին Դեմոկրատական կուսակցության փոխնախագահի, գործարար Վլադ Պլահոտնիուկին:

Օրինակ՝ Դեմոկրատական կուսակցության համար նվիրատվությունների մեծ մասը հասել էր այն հեռուստաընկերություններին, որոնք կառավարվում էին նույն կուսակցության ներկայացուցչի կողմից:

Պետական գումարների նկատմամբ հետաքրքրությունը սկսվում է ընտրարշավներից: Լրագրողների համար կարևոր է պարզել, թե ինչ շահ ունեն այն անձինք, ովքեր ձգտում են պետական պաշտոններ զբաղեցնել և հետևել, թե ուր են գնում պետական գումարները ընտրարշավների ընթացքում:

Նշումների համար

ՆԱՆԱ ԲԻԳԱՆԻՇՎԻԼԻ

ԼՈՒՐՋ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՍԿՍՎԵԼ ՓՈՔՐ ԴԵՏԱԼԻՑ

Վրացական Studio Monitor ՀԿ-ի համահիմնադիրն ու նախագահն է, կազմակերպության՝ հետաքննական լրագրությամբ զբաղվող monitori.ge կայքի խմբագիրը: Եղել է Rustavi 2 հեռուստաընկերության Business Courier, Idea, Money, One Chance, 60 Minutes հաղորդաշարերի լրագրողը, Akhali Versia պարբերականի թղթակիցը: Լրագրողական հետաքննություններ է անցկացրել մարդու իրավունքների ոտնահարման, կոռուպցիայի, կեղծ դատական գործերի, անարդար դատավճիռների և այլ թեմաներով:

Ի տարբերություն նորությունների լրագրության՝ հետաքննականը խորապես ուսումնասիրում է այս կամ այն խնդիրը և արդյունքները ներկայացնում հասարակության դատին: Հետաքննող լրագրողները, լավատես լինելով, ձգտում են կյանքը դեպի լավը փոխել: Նրանք ոչ միայն բացահայտում են ամենատարբեր խախտումները, այլև փորձում են գտնել՝ «եթե առկա իրողությունն այնքան էլ լավը չէ, ապա ինչպիսի՞ն պիտի լինի այն» հարցի պատասխանը:

Studio Monitor-ի լրագրողական հետաքննություններում, որոնց թիվը 150-ից ավելի է, մենք բազմաթիվ հարցերի ենք անդրադարձել: Անգամ անզեն աչքով տեսանելի է, որ հետաքննությունների համար մենք միշտ ընտրում ենք ամենասուր թեմաները, որոնք տվյալ պահին ամենից շատն են հուզում հասարակությանը:

Երբ երկրում սկսվեց «հանցագործների նկատմամբ զրոյական հանդուրժողականություն» սկզբունքով «թխված» քրեական գործերի մանրամասն ուսումնասիրությունը, մասնավոր սեփականության ապօրինի զավթման դեպքերի մասին հետաքննություններն աստիճանաբար հետին պլան մղվեցին:

Քրեակատարողական հիմնարկների ծանրաբեռնվածության աննախադեպ աճը հանգեցրեց անազատության վայրերում խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեպքերի ավելացմանը: Բանտերում մահացության և խոշտանգումների մասին հաղորդումներին հաջորդեց էլիտար կոռուպցիայի հետաքննությունների փուլը:

Ստորև բերված լրագրողական հետաքննությունը լավ օրինակ է, թե ինչպես կարելի է սկսել ուսումնասիրությունն առանց որևէ հանցանշանի, պարզապես կասկածի հիման վրա՝ ապավինելով սեփական կանխազգացումներին: Այս հետաքննությունը՝ (http://bit.ly/2kJ96El), նշանակալից է նաև նրանով, որ օգտագործվեցին այդ ժամանակ երկրում մատչելի տվյալների համարյա բոլոր բաց բազաները: Իսկ ամենակարևորը. հետաքննության արդյունքների հրապարակումից հետո Թբիլիսիի քաղաքապետարանի ստեղծած հիմնադրամը սկսեց ենթարկվել պետական գնումների մասին օրենքին և այժմ սեփականությունն օտարում է աճուրդների միջոցով:

2007-2012 թվականների ընթացքում Թբիլիսիի քաղաքապետարանն իրականցրեց «Հին Թբիլիսիի նոր կյանքը» նախագիծը՝ մայրաքաղաքի պատմական թաղամասերի վերականգնման նպատակով: Թբիլիսիի քաղաքապետարանի նախաձեռնած այս նախագիծը կարևոր էր ոչ միայն Հին Թբիլիսիի պատմական շենքերի վերականգնման (իսկ երբեմն նաև փրկության), այլև՝ մայրաքաղաքի տուրիստական ներուժի մեծացման տեսակետից:

Studio Monitor-ի հետաքննությունն ապացուցեց, որ Թբիլիսիի քաղաքապետարանի ստեղծած հիմնադրամը 365 միլիոն լարի (այդ ժամանակվա փոխարժեքով՝ 219 միլիոն ԱՄՆ դոլար) է ծախսել բյուջեից՝ խախտելով պետական գնումների մասին օրենքը: Բացի այդ, քաղաքային իշխանությունները պատրաստվում էին քաղաքապետարանին պատկանող սեփականությունը (պատմական շենքերը) անհատույց նվիրաբերել հիմնադրամին, ինչը նույնպես օրենքի խախտում էր: Քաղաքապետարանը նորաստեղծ հիմնադրամին տվել էր ո՛չ արդյունաբերական, ո՛չ էլ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ, ինչով էլ հիմնադրամն ու քաղաքապետարանը արդարացնում էին բյուջետային միջոցներն առանց մրցույթի ծախսելը: Իսկ ուղիղ վաճառքով օտարված անշարժ գույքն էլ հայտնվել էր պաշտոնյաների մերձավորների ձեռքերում:

Բացի այդ, լրագրողական հետաքննությամբ բացահայտվեց, որ բյուջեն 10 միլիոն ԱՄՆ դոլարի վնաս է կրել նախագահ Միխայիլ Սահակաշվիլուն մտերիմ գործարարին պատմական հրապարակներից մեկի (Ռիկե) վաճառքից: Փորձագետները միաձայն հաստատեցին, որ լրագրողական հետաքննությամբ բացահայտված փաստերը վկայում են երկրում էլիտար կոռուպցիայի մասին:

Երբեմն լուրջ հետաքննությունը կարող է սկսվել փոքր, կարծես աննշան դետալից: Այսպես, օրինակ, Թբիլիսիի պատմական Աղմաշենեբելի պողոտայի վերակառուցման ժամանակ հին երկհարկանի շենքերից մեկի տանիքը երկու անգամ փոխվեց, ապա, ի վերջո, դրա վրա վերնահարկ կառուցվեց:

Տեսնելով կառուցված վերնահարկը՝ ես հետաքրքրվեցի՝ որտեղից են ֆինանսավորվում այդ աշխատանքները, և ինչո՞ւ են այդքան անխղճորեն ծախսում բյուջեն: Պատասխանները ստանալու համար, ես, բնականաբար, դիմեցի Թբիլիսիի քաղաքապետարան: Հենց այստեղից էլ իմացա, որ Աղմաշենեբելի պողոտայի վերակառուցումն իրականացնում է Թբիլիսիի զարգացման հիմնադրամը, որը հիմնել էր քաղաքապետարանը: Ավելին՝ ըստ պետական ռեեստրի տվյալների, հիմնադրամը ստեղծվել էր հենց այդ նպատակով: Հիմնադրամի վարչությունում, բացի տարբեր նախարարությունների ներկայացուցիչներից, ընդգրկված էին նաև քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտոնյաներ:

Այդ ժամանակ արդեն ես պաշտոնապես դիմեցի հիմնադրամին: Ապարդյուն. հիմնադրամի իրավաբանը պատասխանեց, որ ես իրավունք չունեմ պահանջելու ֆինանսական հաշվետվություն, քանի որ հիմ-

նադրամը ոչ առևտրային իրավաբանական անձ է: Ստացվել էր մի փակ շրջան: Մյուս կողմից՝ հենց դա ինձ հուշեց, որ հետաքննությունը հարկ է անպայման շարունակել:

Համացանցում ծանոթացա մայրաքաղաքի պատմական թաղամասերի վերականգնման նախագծի վերաբերյալ պաշտոնական ատյանների տարածած բոլոր տեղեկություններին ու նորություններին: Տեղեկատվական առումով համարյա ոչինչ չկար, բացի մակետներից, սլայդ-շոուներից և խոստումներից: Ֆինանսների մասին տեղեկություններն ասես գետնի տակն էին անցել:

Թբիլիսիի քաղաքապետարանից հանրային տեղեկություն պահանջելն էլ, պարզվեց, անհույս էր: Համաձայնեք, երբ խոսքը հարյուր միլիոնավոր լարի գումարի մասին է՝ տեղեկություն ստանալը հանաք բան չէ:

Շարունակելով փորփրել՝ հայցով դիմեցի դատարան, փորձելով այդ ճանապարհով քաղաքապետարանից տեղեկություններ ստանալ, թե Թբիլիսիի քաղաքային բյուջեից ընդհանուր առմամբ որքան գումար է փոխանցվել Թբիլիսիի զարգացման հիմնադրամի հաշվին, ինչպես են ծախսվել այդ միջոցները: Քանի որ դատական գործընթացը երկարատև է, ժամանակ չկորցնելու համար դիմեցի նաև հասարակական կազմակերպություններին՝ հույս ունենալով, որ երրորդ սեկտորը ասելիք կունենա: Թեման կարող էր հետաքրքրել որոշակի ուղղվածության, օրինակ՝ մշակութային ժառանգության պահպանման կամ երկրում կոռուպցիայի հարցերով զբաղվող ՀԿ-ների:

Ըստ փորձագետների՝ քաղաքի պատմական թաղամասերի վերականգնումը խախտումներով էր իրականացվում, հապճեպ, առանց պահպանելու մշակութային ժառանգության հուշարձանները: Որպես կանոն, քանդում էին 200-ամյա ճակատները և դրանք փոխարինում ցեմենտով և նույնիսկ գիպսով: ՀԿ-ներն ինձ խորհուրդ տվեցին դիմել Նանա Ջանաշիային: Նա հրապարակավ բողոքում էր 16-րդ դարին վերագրվող իր նկուղի քանդման դեմ: Ահա և առաջին հարցազրույցը ստացվեց:

Ինչ վերաբերում է ֆինանսներին, ապա այստեղ գործն ավելի բարդ էր: «Ինֆորմացիայի ազատության զարգացման ինստիտուտ» ՀԿ-ից իմացա, որ նրանք էլ մի քանի անգամ տեղեկություններ ստանալու հարցմամբ դիմել են պաշտոնական ատյաններին: Եվ դարձյալ՝ ապարդյուն: Զուգահեռաբար շարունակում էի տեղեկություններ փնտրել տվյալների բազաներում:

Սկսած 2010 թվականից Պետական գնումների գործակալության տվյալների էլեկտրոնային բազայում (http://procurement.gov.ge) տե-

ղադրվում են պետական կառույցների հայտարարած բոլոր մրցույթնե-րի (տենդերների) մասին տեղեկությունները: Այնտեղ կարելի է գտնել, թե ով է հայտարարում մրցույթը, ինչ գումարի, ովքեր են մասնակցում և վերջապես՝ ով հաղթեց:

Այդ տվյալների բազայից ես շատ կարևոր տեղեկություն քաղեցի. Թբիլիսիի զարգացման հիմնադրամը այդպես էլ մրցույթ չէր հայտարա-րել: Այսինքն՝ տվյալների բազայում այդ մասին ոչ մի տեղեկություն չկար. միլիոնավոր լարիներ ծախսվել են պետական գնումների մասին օրենքի շրջանցումով:

Պետական ռեեստրի ազգային գործակալության տվյալների բա-զան (http://napr.gov.ge) նույնպես կարևոր աղբյուր է: Արդյունաբերական ռեեստրը սպառիչ տեղեկություններ է տալիս ցանկացած ընկերության մասին, ներառյալ՝ հիմնադիրները, հիմնադրման ամսաթիվը, հիմնա-դիրների հնարավոր փոփոխությունները, ընկերության կամ մասնա-բաժնի վաճառքը, համապատասխան գինը և այլն:

Անշարժ գույքի ռեեստրն, իր հերթին, ունի մասնավոր սեփականա-տիրոջ կամ իրավաբանական անձի անունով գրանցված անշարժ գույ-քի վերաբերյալ բոլոր տեղեկությունները: Ռեեստրի տվյալների բազայից տեղեկացա, որ վերջին մի քանի տարիներին հիմնադրամի անունով է գրանցվել շուրջ հարյուր միավոր անշարժ գույք, ներառյալ Թբիլիսիի հանրահայտ պատմական շենքերը: Պարզվեց նաև, որ Թբիլիսիի իշխա-նություններն այդ շենքերը փուլ առ փուլ անհատույց օտարել են հիմ-նադրամին, որն էլ, ի վերջո, դարձել է դրանց տնօրինողը՝ քաղաքապե-տարանի փոխարեն: Եվ այս ամենից հետո հիմնադրամը պաշտոնապես հայտարարում էր, թե վարչական օրենսգիրքն իր նկատմամբ կիրառելի չէ:

Պետական ռեեստրի տվյալների բազայում յուրաքանչյուր շինու-թյուն և հողակտոր ունի իր կոդը: Դրանով ես կարող եմ իմանալ, թե ինչ ճակատագրի է արժանացել գույքը հիմնադրամի տնօրինությանն անց-նելուց հետո: Դա շատ հետաքրքիր զբաղմունք դուրս եկավ և ինձանից մոտ երկու ամիս խլեց: Ըստ պետական ռեեստրի տվյալների՝հիմնադ-րամն այդ քաղաքապատկան գույքը վաճառել էր առանց մրցույթի, այ-սինքն՝ ըստ սեփական հայեցողության:

Ռեեստրից քաղված՝ հիմնադրամի գործունեությանը վերաբերող տեղեկությունների ծովում մի տեղեկանք հատկապես հետաքրքիր էր:

Ռիկեի 10-միլիոնանոց գործը

2010 թվականին հիմնադրամն ավարտեց Թբիլիսիի պատմական Ռիկե հրապարակի վերակառուցումը: Նախորդ տարիներին քաղաքի կենտրոնում գտնվող հրապարակը (4000 քմ) տարբեր մասնավոր անձանց սեփականությունն էր: Իշխանությունների ճնշմամբ սեփականատերերը ի վերջո անհատույց իրենց սեփականությունները նվիրեցին պետությանը:

Թբիլիսիի քաղաքապետարանը հայտարարեց հրապարակի վերակառուցման և զարգացման մրցույթ, որում հաղթեց Վրաստանի նախագահի հետ առնչությունների մեջ կասկածվող բիզնես խմբի անդամ մի ընկերություն («Նոր Ռիկի»): Վերջինս, հրապարակի համար վճարելով 7 միլիոն ԱՄՆ դոլար, պարտավորվել էր կատարել մրցույթի պայմանները. կառուցել հանգստի գոտի, ինչպես նաև՝ Մտկվարի (Կուր) գետի վրա կամուրջ:

Համաձայն պետական ռեեստրի տվյալների (առուվաճառքի նոտարական փաստաթղթեր)՝ երկու տարի անց Թբիլիսիի զարգացման հիմնադրամը գնել է այդ տարածքը՝ վճարելով 17 միլիոն դոլար, այն դեպքում, երբ «Նոր Ռիկի»-ն չէր կատարել մրցույթի պայմանները:

Այլ կերպ ասած, փոխանակ մրցույթի պայմանները չկատարելու համար սանկցիաների արժանանալու (ինչը հաճախ է լինում պրակտիկայում), «Նոր Ռիկի» ընկերությունը ստացավ 10 մլն դոլարի շահույթ:

Ինչ վերաբերում է մրցույթի պայմաններին (հրապարակի վերակառուցում և Խաղաղության կամրջի կառուցում), ապա հիմնադրամն այն կատարեց բյուջեից ստացված միջոցների հաշվին:

Ռեեստրի նույն տվյալների բազայի համաձայն՝ երկու պատմական շենքերի սեփականատեր էր դարձել մի օֆշորային ընկերություն, որի տնօրենը Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավայի ընտանիքի անդամ էր:

Թբիլիսիի քաղաքապետարանի ճարտարապետական ծառայության կայքը (http://tas.ge) ևս մի տվյալների բազա է, որը ես օգտագործեցի հետաքննության ժամանակ:

Թբիլիսիի պատմական թաղամասերի վերականգնման ընթացքում, բացի հին շենքերի վերակառուցումից, քաղաքի իշխանությունների որոշմամբ նաև նոր շենքեր են կառուցվել: Այդ շինարարություններից մեկն իմ ուշադրությունը գրավեց նրանով, որ իրականացվել էր փոքրիկ պուրակի տեղում: Ինձ, իհարկե, չհաջողվեց պաշտոնական տեղեկություններ ստանալ, թե ինչու է որոշվել հատել ծառերն ու շենք կառու-

ցել, և ով է սեփականատերը: Ես շարունակեցի մանրակրկիտ փնտրտու-քը ճարտարապետական ծառայության կայքում: Գտա ճշգրիտ հասցեն, որն այդ փուլում բավարար էր:

Որոնման ընթացքում, այդ վայրի մասին տեղեկության կողքին, պատահաբար հայտնաբերեցի մի գրառում, որը, հավանաբար, այդ-տեղ էր հայտնվել ծառայողներից մեկի անփութության պատճառով. «Դավիթ Նինիձեն ասել է. գրանցել տեղացու անունով, իսկ հետո մի հոգի ուզում է մի մասը գրասենյակի համար, իսկ մի մասն էլ՝ ավտո-կանգառի: Չ՛վաճառել»: Հիշեցնեմ, որ Դավիթ Նինիձեն Թբիլիսիի փոխ-քաղաքապետն էր և համատեղությամբ նաև Թբիլիսիի զարգացման հիմնադրամի վարչության անդամ:

Ծանր մեղադրանքների (կամ փաստերի) վերաբերյալ մեկնաբա-նություններ ստանալը հետաքննության կարևոր կողմերից է: Տվյալ դեպ-քում չպետք է ապավինել մամուլի ծառայության հետ համաձայնեցված հարցազրույցին: Փնտրեք այլ ուղիներ: Իմացեք, թե ձեզ հետաքրքրող պաշտոնյան որտեղ է պլանավորում անցկացնել իր մոտակա հրապա-րակային հանդիպումը: Դա քիչ ժամանակ չի խլի: Սակայն չարչարանքն իզուր չի անցնի:

Նշումների համար

ՊԱՎԼԱ ՀՈԼՑՈՎԱ

ՀԱՆՑԱԽՈՒՄԲ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ, ԿՈՆՅԱԿ

Չեխիայի Հետաքննական լրագրության կենտրոնի հիմնադիր տնօրենն է։ Հետաքննել է փողերի լվացման և օֆշորային կազմակերպությունների վերաբերյալ դեպքեր։ Ներգրավված է OCCRP-ի միջազգային հետաքննական նախագծերում։ Եղել է People in Need մարդասիրական կազմակերպության Կուբայի բաժնի ղեկավարը, մեդիա կազմակերպությունների համար բաց կոդով գործիքներ մշակող Եվրոպայի ամենամեծ կազմակերպության՝ Sourcefabric-ի միջազգային ծրագրերի ղեկավարը։ Արժանացել է Global Shining Light-ի և Եվրամիության հետաքննական լրագրության մրցանակներին։

Մենք՝ Չեխիայի հետաքննական լրագրության կենտրոնի աշխատակիցներս, մեծապես հավատում ենք լրագրողների միջև համագործակցությանը: Իսկ եթե համագործակցությունն անդրսահմանային է, ապա՝ ավելի լավ: Մենք հետաքննական լրագրության երեք հիմնական ցանցերի՝ Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի (https://www.OCCRP.org), Հետաքննական լրագրության գլոբալ ցանցի (www.GIJN.org) և Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի (https://www.ICIJ.org) անդամ ենք: Ուստի մեր պատմությունների մեծ մասն, իսկապես, անդրսահմանային բնույթ ունի: Միայն անցյալ տարի մենք մի քանի խոշոր բացահայտում ենք արել՝ Սիրիա և Միջին արևելք զենքի ապօրինի մատակարարման դեպքեր, կոկաինային բիզնես և դրա՝ Պրահայում տեղակայված գլխամասային գրասենյակը, օֆշորային կառույցներ, որոնք օգտագործում էին Կուբայի նախագահներ Ֆիդել և Ռաուլ Կաստրոները:

OCCRP-ի կազմակերպած՝ հետաքննող լրագրողների հանդիպումներից մեկի ժամանակ ես ծանոթացա և խոսեցի մեր հայ գործընկերներ էդիկ Բաղդասարյանի և Վահե Սարուխանյանի հետ՝ «Հետք»-ից: Ես նրանց պատմեցի, թե ինչ հանրամատչելի տվյալներ կան Չեխիայի Հանրապետությունում:

Մի քանի ամիս անց էլեկտրոնային նամակներ ստացա. ինձ գրում էին էդիկ Բաղդասարյանն ու Քրիստինե Աղալարյանը: Նրանք առաջարկում էին համագործակցել Հայաստանի վերաբերյալ մի ծրագրի շուրջ: Իմ պատասխանը դրական էր, և 2016 թ.-ի սկզբին «Հետք»-ի լրագրողներ Վահեն և Մարինեն ժամանեցին Պրահա: Այս մարդիկ ապշեցուցիչ գործ արեցին: Նրանք մեկ շաբաթվա ընթացքում կարողացան հետազոտել ոչ միայն Չեխիայի բիզնեսները և հողային կադաստրները, այլև՝ Պրահայի հանրային տրանսպորտի ոլորտը: Ի վերջո, այդ ամենից ստեղծվեց որակյալ հետաքննական հոդվածների մի բարդ շարք, որոնցից վերջինը հրապարակվել է «Թվապատում. մեդիան ընդդեմ կոռուպցիայի» գիտաժողովից (6-8 դեկտեմբերի, 2016) ընդամենը մեկ շաբաթ առաջ: Հնարավոր է, որ առաջիկայում նոր հոդվածներ էլ լինեն...

Մենք սկսել ենք համագործակցությունը՝ ներկայացնելով Չեխիայի բիզնես ռեգիստրը, որն ունի իր առավելություններն ու թերությունները: Առավելությունն այն է, որ Չեխիայի բիզնես ռեգիստրում ներառված են բազմաթիվ տվյալներ, այդ թվում՝ ընկերության հիմնադրման ամսաթիվ, պատմություն, ընկերությանն առնչվող փաստաթղթեր՝ ինչպես, օրինակ,

տարեկան հաշվետվություններ, ֆինանսական հայտարարագրեր և այլն: Թերությունն այն է, որ պաշտոնական լծակ չկա՝ ստիպելու ընկերություններին թարմացնել իրենց տեղեկությունները և տրամադրել բոլոր համապատասխան փաստաթղթերը: Հետևաբար երբեմն կարևոր ֆինանսական տվյալներ գտնելու փոխարեն դատարկ վանդակ է հայտնվում:

Չեխիայի բիզնես ռեգիստրն անվճար հասանալի է առցանց, հետևյալ հասցեներով՝ https://bit.ly/2kqRqNB, https://bit.ly/1mr111k:

Կարելի է որոնել ըստ՝

- ընկերության անվանման,
- անձի անվան,
- բաժնետիրոջ անվան:

Բիզնես ռեգիստրը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

- անձի համար՝ անուն, ծննդյան ամսաթիվ, մշտական բնակության վայր, ընկերությունում զբաղեցրած պաշտոն,
- ընկերության համար՝ պատմություն, բաժնեմասեր/բաժնետերեր, հասցե, նույնականացման համար:

«Sbirka listin» բաժնում կան պատճենված (սկանավորված) փաստաթղթեր, որոնք վերաբերում են տվյալ ընկերությանը, ինչպես օրինակ՝ հիմնադիր փաստաթղթեր, տարեկան զեկույցներ, ֆինանսական հաշվետվություններ, բաժնեմասերի փոխանցումներ և այլն:

Չեխերենը դժվար լեզու է, սակայն Google translate-ը կարող է օգնել հիմնականում կողմնորոշվել:

Բոլորովին այլ է հողային կադաստրի իրավիճակը: Այստեղ կարող եք փնտրել ոչ միայն հասցեով, այլև սեփականատիրոջ անվամբ: Միայն երկու խնդիր կա՝ այդ տվյալները որոնելու համար անհրաժեշտ է հողային կադաստրի կողմից հաստատված հատուկ հաշիվ: Բարեբախտաբար, մենք ունենք այդպիսի հաշիվ: Եվ երկրորդը՝ հողային կադաստրը լի է այդ տվյալները գտնելու բարդ ընթացակարգերով կամ տարօրինակ հապավումներով, օրինակ՝ LV, V2015 և այլն: Սակայն դա մեզ չի կանգնեցրել: Ահա դրա հանրամատչելի հատվածը. հասցեով փնտրելու համար պետք է մուտք գործել հողային կադաստր այս հղումով՝ http://bit.ly/2joiifj:

Ավելի պարզեցված տարբերակը, որտեղ կարող եք ընտրել անշարժ գույքը՝ քարտեզին սեղմելով, այստեղ է՝ http://ikatastr.cz/ ։

Կարելի է նաև փնտրել ըստ անձի անվան (ինչ սեփականություն ունի անձը), սակայն դրա համար ընդլայնված մուտք է անհրաժեշտ՝ Չեխիայի հողային կադաստրի գրասենյակի թույլտվությամբ: Ըստ անվան որոնումը վճարովի է:

Մենք առաջ էինք քաշել աշխատանքային վարկած, ըստ որի կան ազդեցիկ հայ գործարարներ, ովքեր ներդրումներ են կատարում Պրահայի և մերձակայքի անշարժ գույքի շուկայում: Որպես երկրորդ վարկած որոշեցինք հետաքննել նաև, թե արդյոք չեխական ակտիվները պատշաճ հայտարարագրվում են հայ քաղաքական գործիչների ֆինանսական հայտարարագրերում: Եվ վերջին, բայց ոչ պակաս կարևոր խնդիրն էր ուսումնասիրել, թե չեխական գործարար ոլորտում ինչ չափով են ներառված հայ գործարարները:

Այս համագործակցության արդյունքն ակնառու էր. 8 հոդվածների շարք՝ չորս լեզուներով: Ահա, թե ինչ մենք հայտնաբերեցինք:

Ի թիվս այլ փաստերի՝ մենք պարզեցինք, որ

- Հայ համայնքը Պրահայում կենսունակ է, իսկապես ազդեցիկ է և կենտրոնացված հիմնականում Ստոդուլկի (Stodulky) թաղամասում, որտեղ հաստատված է նաև ռուսական փոքրամասնության զգալի մասը: Նրանք որոշակի հետաքրքրություն ունեն նորակառույց բազմաբնակարան շենքերի նկատմամբ, որոնք չեխերենով կոչվում են «պանելակի» (Panelaky):
- 2007թ.-ից ի վեր բարձր դիրք ունեցող հայերի, ինչպես նաև քաղաքական գործիչների, գործարարների և անշարժ գույքի կառուցապատողների ներդրումները սկսել են հոսել Չեխիայի Հանրապետություն:
- Ներդրումների ոլորտներն են հիմնականում ռեստորանները, հյուրանոցները, անշարժ գույքի նախագծերը և մոլեխաղերը:
- Չեխիայի Հանրապետությունում ներդրված գումարների չափը հասնում է տասնյակ միլիոնավոր դոլարների:

Ինչ սովորեցինք համագործակցությունից:

- Լեզուն խնդիր չէ, եթե կա բարի կամք և Google translate:
- Բացի այդ, անշարժ գույքի ակտիվներն աչքով տեսնելը միշտ ավելի լավ է, քան Street view-ի նման վիրտուալ գործիքներ կիրառելը, քանի որ կարող եք համապատասխան տեղեկություններ գտնել ձեր պատմության համար, օրինակ՝ այն մասին, թե ովքեր են ձեր հարևանները:
- Հրաշալի է մարդկանց հետ հարցազրույցներ վարել նրանց մայրենի լեզվով: Միշտ ավելի շատ տեղեկություններ եք ստանում: Սակայն եթե չկա մեկը, ում մայրենի լեզուն հայերենն է, ապա ռուսերենը նույնպես այդ նպատակին լավ է ծառայում:
- Միշտ անհրաժեշտ է տեղայնացնել, այլ ոչ թե թարգմանել հոդվածները: Խնդրի վերաբերյալ չեխական և հայկական ընդհանուր գիտելիքները խիստ տարբերվում են: Հայաստանում հայտնի անունները բոլորովին անհայտ են Չեխիայում և հակառակը: Թարգմանելու փոխարեն՝ պետք է նորովի մատուցել հոդվածը, որպեսզի այն հասկանալի լինի քո լսարանին:

Նշումների համար

ՎԻԿՏՈՐ ՅՈՒԿԵՉԵՎ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ТАК-ТАК-ТАК» ՑԱՆՑՈՒՄ.

«Так-так-так» իրավապաշտպան սոցիալական ցանցի ղեկավարն է։ Որպես լրագրող և խմբագիր աշխատել է Նովոսիբիրսկի լրատվամիջոցներում՝ «Молодость Сибири», РИА «Новости», «Сибирская газета»։ 1999-ից լրագրություն է դասավանդել տարբեր համալսարաններում, Սիբիրի մամուլի զարգացման ինստիտուտի տնօրենն է։ Տասնյակից ավելի մասնագիտական գրքերի հեղինակ է։

Ինչու հենց «Так-так-так» («Այսպես-այսպես-այսպես»)

Եվ ԱՅՍՊԵՍ՝ ինչու է մեր արած գործը այդքան կարևոր: Այսօր ռուսական հասարակության մեջ արդարության ցայտուն արտահայտված հանրային պահանջ է ձևավորվել: Քաղաքացիներն ավելի ու ավելի շատ են ձգտում վերահսկել պետական և տեղական ինքնակառավարման ծախսերը, իրականացնել տեղական կյանքի հրատապ խնդիրների լուծելուն միտված քաղաքացիական նախագծեր: Սակայն նրանց մեծ մասը չգիտի, թե ինչպես դա անել. նրանց բոլորին պակասում են իրավական մշակույթը, գիտելիքներն ու համագործակցության հմտությունները՝ այնպիսի սոցիալական բարդ խնդիրներ լուծելիս, որոնք հնարավոր չէ անտեսել քաղաքացիական հասարակություն ու ժողովրդավարական ինստիտուտներ կառուցելիս:

ԱՅՍՊԵՍ՝ ինչու է այս գործը այդքան հրատապ: Վերջին տարիներին ռուսաստանցիների մեդիասպառման գործընթացում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել: Թեպետ մեծամասնությունն առաջվա պես հիմնական տեղեկությունները քաղում է ավանդական ԶԼՄ-ներից (ըստ Հասարակական կարծիքի ուսումնասիրության համառուսական կենտրոնի (ВЦИОМ) տվյալների՝ կենտրոնական հեռուստատեսությունից՝ 98%, տեղական հեռուստատեսությունից՝ 88%), այսուհանդերձ հարցվածների միայն 78%-ն է հեռուստատեսությունը համարում անաչառ, իսկ առավել հուսալի աղբյուր համարում են համացանցը: Subscribe.ru-ի հարցումների արդյունքներով՝ վստահելիության ամենաբարձր վարկանիշ ունեն նորությունների կայքերը, առցանց լրատվամիջոցները (5%-ն «ամբողջությամբ», 64%-ը՝ «ավելի շուտ» վստահում է), հեռուստատեսությունը (համապատասխանաբար՝ 7% և 55%) և ռադիոն (5% и 53%): Հարցմանը մասնակցած օգտատերերի 63%-ը վստահ է, որ համացանցում սովորական մարդկանց հրապարակած տեղեկությունը կարող է ոչ միայն հասարակական հնչեղություն ստանալ, այլև օգնել լուծելու իրական խնդիրներ: Այս միտումները նկատելի են քաղաքացիական ակտիվության արդյունավետ գործիքներ դարձած սոցիալական ցանցերի և բլոգների օգտատերերի բուռն աճի ֆոնին:

ԱՅՍՊԵՍ՝ այս ամենը փոխկապակցված է. իրավական մշակույթի ցածր մակարդակը և քաղաքացիների համար հրատապ խնդիրների վերաբերյալ անաչառ տեղեկատվության բացակայությունը անվստահություն են ծնում իշխանության մարմինների և ավանդական լրատվամիջոցների նկատմամբ: Չհավատալով, որ իշխանություններն ու ավան-

դական ՋԼՄ-ները կարող են իրապես հասկանալ և պաշտպանել իրենց իրավունքները, մարդիկ ստիպված են լինում ինքնուրույն զբաղվել դրանց պաշտպանությամբ և այդ գործում ունեցած հաջողությունների ու խնդիրների մասին տեղեկություններ տարածել: Ինքնուրույն նշանակում է՝ ինչպես կարողանում են. մեկը՝ մի քիչ լավ, մեկը՝ վատ: Իսկ ավելի լա՞վ չէ, որ դա համատեղ անեն նրանք, ովքեր բախվել են մարդու իրավունքների խախտումների և նրանք, ովքեր գիտեն՝ ինչպես այդ տեղեկությունը հասցնել անսահմանափակ թվով սպառողների, որպեսզի վերջիններս էլ հետաքրքրվեն դեռևս անձամբ իրենց չառնչված խնդիրներով:

Հենց այն քաղաքացիները, որոնք պատկերացում ունեն սահմանադրական իրավունքների և ազատությունների ու իրենց անձնական բարեկեցության միջև կապի մասին, մեծ մասամբ պատրաստ են մասնակցելու ոչ միայն իրենց սեփական իրավունքների պաշտպանությանը, այլև մարդու իրավունքների ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողությանը: Այլ խոսքով՝ նրանք պատրաստ են դառնալու իրավապաշտպաններ, թեպետ մեծամասնությունն իրեն այդպես չի անվանում:

Եվ այսպես-այսպես-այսպես. մենք, թերևս, պատրաստ ենք նշելու այս տեխնոլոգիայի սկզբունքային նորարարությունը. այն է՝ հասարակական հետաքննության թիմային սկզբունքը, որը մինչև ավարտվելը «Так-так-так» կայքում ընթանում է փակ ռեժիմով, որպեսզի համացանցը «չաղտոտվի» չստուգված տեղեկություններով:

Եվ այսպես-այսպես-այսպես. մենք, թերևս, այս տեխնոլոգիայում պատրաստ ենք տեսնել նաև յուրատեսակ «արկած». քանի դեռ օգտատերը կայքում չի ավարտել հետաքննության համապատասխան փուլը, չի կարող անցնել հաջորդ առաջադրանքին. վարկածից՝միջանկյալ վերլուծությանը, սրանից էլ՝ իրավական փորձաքննությանն ու հասարակական վճռին:

Ինչպես

Դուք, իհարկե, հիշում եք, թե ինչ բացականչեց Արքիմեդը, երբ ջրի մեջ բազմիցս ընկղմվելուց հետո բացահայտեց իր օրենքը: Իհարկե՝ «Էվրիկա՜» («գտա՜»): Իսկ մեզ մոտ հնչեց՝ «Так-так-так!» («Այսպես-այսպես-այսպես»): Հենց այդպես, մտախոհ-կենտրոնացած բացականչեց մեր դիզայներ Իգորը՝ «հայտնաբերելով» նախապես «Մարդիկ ասում են» անվանված մեր կայքի խնդիրներից մեկի՝ երկար ժամանակ չգտնվող լուծումը: Ես ուշադիր նայեցի նրա երջանիկ դեմքին. այն փայլում էր բացահայտման և վաստակած հաղթանակի երջանկությունից: Եվ անմի-

ջապես գլխի ընկա. մենք ակամա գտել ենք կայքի անվանումը. չէ՞ որ այն նախատեսված է ճշմարտության որոնման ոչ հասարակ և ոչ միշտ կանխատեսելի՝ համատեղ աշխատանքի համար:

Հապա լսեք.

Այսպես-այսպես-այսպես, ես, կարծես թե, գաղափա՛ր եմ գտել:

Այսպես-այսպես-այսպես, մենք մոտենում ենք ճշմարտությա՛նը:

Այսպես-այսպես-այսպես, մենք դա արեցի՛նք:

Ձեռքի տակ ունենալով հավաստի և նշանակալի ապացույցներ, հասարակական հետաքննողները կարող են ավելի վստահ սկզբունքային երկխոսություն վարել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ու պահանջել արձագանքել հետաքննությամբ բացահայտված մարդու իրավունքների խախտումներին:

Այսպիսով, հասարակական հետաքննողների թիմերը, որոնք միշտ չէ, որ կազմված են պրոֆեսիոնալ լրագրողներից, իրական ժամանակի ռեժիմով տիրապետում են որակյալ մեդիատեխնոլոգիաների և վարժվում են իրենց հետաքննությունների արդյունքների սոցիալական պատասխանատվությանը:

Ահա, մոտավորապես այսպես: Այդ պատճառով էլ՝ «Այսպես-այսպես-այսպես»

Հասարակական հետաքննություն և հանրային շահ

Եկեք նախ հիշենք, թե ինչպիսի հետաքննություններ են լինում: Իհարկե, դուք գիտեք դրանք. ծառայողական քննություն, պատգամավորական (կամ խորհրդարանական) հետաքննություն, հանցագործության հետաքննություն, որն իրականացնում են իրավապահ մարմինները: Սակայն մենք այդ հետաքննություններն այստեղ չենք քննարկի: Հետաքննությունների մեր ձևաչափը նախատեսված է լրագրողների և քաղաքացիական ակտիվիստների համար, որոնք պատրաստ են համատեղ հետազոտել հանրային շահ պարունակող որոշ փակ կամ խնամքով թաքցված խնդիրներ:

Հանրային շահը հասարակական հետաքննության համար առանցքային է: Եվ քանի դեռ մենք չենք հասկացել, թե ինչ է հանրային շահը, ինչպես այն վեր հանել և ինչպես ներկայացնել հասարակությանը, ավելի լավ է հետաքննությունը չսկսել:

Ռուսական իրավական դաշտում հանրային շահի միասնական սահմանում չկա: Մենք առաջարկում ենք հանրային շահը բացահայ-

տել հասարակության համար սպառնալիքների միջոցով: Դրանք մի քանիսն են, սակայն մենք նշենք կարևորները.

- Սպառնալիք հասարակական առողջությանն ու անվտանգությանը:
- Պաշտոնատար անձանց կամ կազմակերպությունների գործողություններով կամ անգործությամբ մարդկանց թյուրիմացության մեջ գցելու սպառնալիք:
- Այնպիսի տեղեկությունները թաքցնելու սպառնալիք, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս իրենց համար կարևոր խնդիրների վերաբերյալ կայացնելու գիտակցված որոշումներ:

Ձեր հասարակական հետաքննության համար թեմա ընտրելիս, պետք է խնդիրը (իրավիճակը, միտումը) դիտարկեք ասես զտիչով. այս երեք սպառնալիքներից ո՞րն է առկա:

Դուք, իհարկե, հիշում եք դասական բանաձևը. կարո՞ղ է արդյոք շան մասին սյուժեն դառնալ նորություն: Պատասխան. կարող է: Սակայն եթե շունը կծել է մարդուն՝ նորություն չէ, իսկ, այ, եթե մարդը կծի շանը՝ արդեն նորություն է: Այդպես էլ մեր դեպքում է. կարո՞ղ է քաղաքապետի տատիկի մասին սյուժեն հասարակական հետաքննության թեմա դառնալ: Պատասխան. կարող է: Սակայն եթե ինչ-որ մեկը գողացել է քաղաքապետի տատիկի դրամապանակը, ապա սա հասարակական հետաքննության թեմա չէ: Իսկ, այ, եթե քաղաքապետը իր տատիկի անունով է գրանցել իր բիզնեսն ու բնակարանը, ապա՝ անշուշտ թեմա է: Ինչպե՞ս ստուգել: Փորձեք պատասխանել երեք հարցերից մեկին, հիշեք՝ կա՞, արդյոք, այստեղ որևէ (թեկուզ մի) սպառնալիք հասարակության համար: Պարզվում է՝ այստեղ առնվազն երկուսը կա. թյուրիմացության մեջ գցելը և տեղեկությունը թաքցնելը: Սկսե՞նք հետաքննությունը: Այո, սկսենք: Սակայն ինչպիսի՞. լրագրողակա՞ն, թե՞ հասարակական: Իսկ տարբերությո՞ւն կա: Կա՛: Ես ձեր ուշադրությունը հրավիրեմ միայն երեք՝ շատ էական տարբերությունների վրա.

- «Так-так-так» կայքում հասարակական հետաքննություն կարող է սկսել ցանկացած մարդ:
- Հասարակական հետաքննության պարտադիր սկզբունք է թիմային աշխատանքը (լրագրողներ + քաղաքացիական ակտիվիստներ):

- Հասարակական հետաքննության արդյունքը պիտի լինի սոցիալական մի նախագիծ, որը քաղաքացիներին կներգրավի վեր հանված խնդիրների լուծման գործընթացի մեջ:

Նկատեցի՞ք հիմնական նմանություններն ու տարբերությունները: Հետաքննող կարող է լինել ցանկացած քաղաքացի. սակայն ավելի լավ է դա անել միավորվելով նախ՝ համախոհների հետ մի թիմում, իսկ հետո՝ սեփական հանրույթում՝ համերկրացիների հետ միասնական նախագծում: Սրա համար էլ մենք «Так-так-так» կայքում, բացի «Հետաքննություններ» բաժնից ստեղծել ենք դրա շարունակությունը՝ «Հատուկ նախագծեր»-ը: Եվ այնտեղ, որտեղ ավարտվում է լրագրողական հետաքննությունը՝ իրականության բացահայտումը, սկսվում է հասարակական հետաքննության վերջին փուլը՝ հասարակության ուժերով իրավիճակի փոփոխության հասնելու սոցիալական նախագիծը:

Իսկ որոնք են ռիսկերը

Առաջինը, որ աչքի է զարնում սոցիալական նախագծերում, ինչ-որ մեկի խախտված իրավունքների պաշտպանությանը միտված գործունեությունն է: Մի՞թե այստեղ շահերի հնարավոր բախում չէ թաքնված. չէ՞ որ հետևելով այս սխեմային լրագրողը պետք է դուրս գա մեդիահարթակում քաղաքացիների իրավունքների պաշտպանության շրջանակից և շարունակի այդ գործն արդեն իրական կյանքում: Ճիշտ է, ենթադրվում է, որ նա դա պիտի անի կարծես, արդեն ոչ թե իբրև լրագրող, այլ իբրև տեղական հանրության ներկայացուցիչ: Եվ այսուհանդերձ...

Ռուսաստանի լրագրողների մասնագիտական էթիկայի կանոնագրում այս հարցը չի կարգավորվում: Դրանում ասված է՝ «լրագրողն իր մասնագիտական կարգավիճակն անհամատեղելի է համարում պետական կառավարման, օրենսդիր կամ դատական իշխանության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և քաղաքական ուղղվածության այլ կազմակերպությունների ղեկավար մարմիններում պաշտոններ զբաղեցնելու հետ»: Սակայն հասարակական գործունեության մասին խոսք չկա: Ուրեմն՝ կարելի՞ է:

Շատ ավելի հստակ այն գրված է The Washington Post թերթի էթիկական կանոններում. «Մենք խուսափում ենք քաղաքական, հասարակական, սոցիալական շարժումներին և ցույցերին ակտիվ մասնակցելուց, ինչը կարող է վիճելի դարձնել անաչառ, անկողմնակալ և արդարացի հրատարակության մեր վարկը»:

Սա նշանակո՞ւմ է, արդյոք, որ հասարակական հետաքննությունն ավարտելուց հետո հեղինակը անցնում է լրագրողական չափանիշների սահմանը և պետք է հետևի արդեն այլ՝ իրավապաշտպան էթիկայի: ՄԱԿ-ի՝ Իրավապաշտպանների պաշտպանության հռչակագրում գրված է, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի պաշտպանելու իր և այլոց իրավունքները: Այդ պատճառով ոչ մեկին չի կարելի արգելել զբաղվելու իրավապաշտպանությամբ: Այդ թվում և լրագրողին:

Եվ այսպես, արձանագրենք երկընտրանքը. իրավապաշտպան գործունեությունը լրագրողին հեռացնում է մասնագիտության շրջանակներից, սակայն յուրաքանչյուր ոք իրավունք ունի զբաղվելու իրավապաշտպան գործունեությամբ: Ընդ որում, միասնական իրավապաշտպան էթիկա, որպեսզի հնարավոր լինի համեմատել լրագրողների և իրավապաշտպանների չափանիշներն ու վեր հանել դրանց իրական նմանություններն ու տարբերությունները, այսօր Ռուսաստանում չկա: Նկատենք, սակայն,որ չկա նաև լրագրողական էթիկա, որը 1994 թվականից մեծ հաշվով գոյություն ունի միայն մասնագիտական կանոնագրում, այսինքն՝ միայն թղթի վրա:

Սակայն եթե ընդհանուր իրավապաշտպան էթիկա առայժմ չկա, իսկ իրավապաշտպանությամբ կարող է զբաղվել յուրաքանչյուր մարդ (այդ թվում և լրագրողը), գուցե իմաստ ունի խոսել ժամանակակից հաղորդակցական տարածքում համատեղ աշխատանքի ինչ-որ ընդհանուր էթիկայի՞ մասին: Եվ եթե հիշենք, որ ռուսաստանցիների կեսից ավելին այսօր չի վստահում պրոֆեսիոնալ լրատվամիջոցներին, ապա հասկանալի կդառնա ավելի ու ավելի շատ «տեղեկատվական ինքնասպասարկմամբ» զբաղվելու քաղաքացիների ցանկությունը: Եվ նման «ինքնասպասարկման» լավագույն ձևը, իմ կարծիքով, պրոֆեսիոնալ լրագրողների հետ մասնակցությունն է հասարակական հետաքննություններին, որտեղ երկու կողմերն էլ կլրացնեն իրար. քաղաքացիները լրագրողներին՝ մարդու իրավունքների կարևորությունը գիտակցել տալով, իսկ լրագրողները քաղաքացիներին՝ տեխնոլոգիաներով և տեղեկությունների հետ որակյալ աշխատանքի չափանիշներով: Եվ այդ դեպքում ընդհանուր գործի էթիկայի մասին պատկերացումները կմերձենան: Իսկ ինչպես հայտնի է, ցանկացած գործ սկսվում է դրա մասին մեր պատկերացումներից:

Նշումների համար

ԷՎԱԼԴԱՍ ԼԱԲԱՆԱՈՒՍԿԱՍ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱԿՆԿԱԼԵԼ, ԵՐԲ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ Է

Լիտվական Veidas շաբաթաթերթի գլխավոր խմբագիրն է: Մինչ այդ եղել է veidas.lt կայքի, Լիտվայում առաջատար 15min.lt լրատվական կայքի բջջային հավելվածի , Diena Media News մեդիա գրուպի գլխավոր խմբագիրը: Լուսաբանել է Ուկրաինայի Նարնջագույն հեղափոխությունը, ռուս-վրացական պատերազմը:

Լրագրողական հետաքննության հրապարակումից հետո թե՛ հեղինակը և թե՛ խմբագրությունը բախվում են նոր մարտահրավերների, որոնք կարող են վճռորոշ լինել նրանց համար: Եթե հակառակորդները պրոֆեսիոնալներ են, ինչպես իմ դեպքում, նրանք կկիրառեն հետևյալ բոլոր մեթոդների համակցությունը. հերքում, վարկաբեկում, կեղծ իրադարձություններ, իրավական գործողություններ: Ինչպե՞ս մեղմել այդ հարձակումները:

Ամբողջ աշխարհում լրատվամիջոցներն անցնում են փոխակերպման բարդ գործընթացի միջով, որի ամենաբարդ մարտահրավերներից մեկը լրագրության (այդ թվում նաև՝ հետաքննական լրագրության) որակի վատթարացումն է: Մի շարք խոշոր մեդիա ընկերություններ փակել են իրենց խմբագրությունների հետաքննական բաժինները (այս մասին ավելի մանրամասն կարդացեք հետևյալ հղումով՝ http://on.cc.com/2jldJ5B):

Ինչպես հայտնի է, հետաքննական լրագրությունը ծախսատար է: Հետաքննական լավ հաղորդում պատրաստելու համար շատ ժամանակ և աշխատանք է անհրաժեշտ: Ստիպված եք գտնել և ստուգել բազմաթիվ տվյալներ, ապա ստուգել դրանք նորից ու նորից, համոզել մարդկանց խոսել բարդ հարցերի շուրջ և այնուհետև՝ մեկ անգամ ևս ստուգել ձեր տեղեկությունները:

Բացի այդ՝ հետաքննությունները միշտ չէ, որ հասնում են իրենց նպատակին: Երբեմն ձեր հետաքննությունը չի արժանանում այն ուշադրության, ինչ դուք ակնկալում էիք, երբեմն էլ՝ որևէ ազդեցություն չի ունենում հասարակության վրա: Լինում է նաև, որ այն ընդհանրապես չի հրապարակվում: Պատճառները բազմաթիվ են՝ խմբագրի ընտրությունը, լրատվամիջոցի տիրոջ գործարար շահերը և այլն: Այլ սկզբունքային հարց է, թե արդյոք մարդիկ ընդհանրապես հետաքրքրված են հետաքննական լրագրությամբ (այս մասին ավելի մանրամասն կարող եք կարդալ այս հղումով՝ http://bit.ly/2iZ1hK2):

Եթե նույնիսկ կարողացել եք հաղթահարել բոլոր մարտահրավերները և հրապարակել ձեր հետաքննությունը, դա դեռ պատմության ավարտը չէ: Հետաքննական նյութի հրապարակումից հետո թե՛ հեղինակը և թե՛ հրատարակիչը բախվում են այլ խնդիրների, որոնք կարող են վճռորոշ լինել նրանց համար:

Այս հոդվածը հիմնված է գլխավորապես իմ անձնական փորձի վրա: 2011թ-ին ես «Vilniaus diena» («Վիլնյուսի օր») թերթի փոխխմբագիրն էի, պատասխանատու էի թերթի բովանդակության համար: Մեր օրաթերթի լրագրողներից մեկը՝ Սարունաս Չերնյաուսկասը հետաքն-

նում էր Լիտվայի էկոնոմիկայի նախարարի ենթադրյալ կապերը իր ընտանեկան բիզնեսի հետ: Շատ լավ հիշում եմ, թե ես և Սարունասը քանի անգամ և որքան հանգամանալից էինք ստուգել հավաքած փաստերը: Ի վերջո, պատմությունը հրապարակվեց: Ես շատ անհանգիստ էի. հնարավոր էր՝ սխալներ թույլ տված լինեինք, այդ դեպքում պատրաստ էի նույնիսկ աշխատանքից ազատվել: Սակայն մեր տեղեկությունները հավաստի էին: Չերկարացնելով նշեմ, որ պատմության հրապարակումից հետո մենք ենթարկվեցինք ահռելի ճնշումների, սակայն մի քանի ամիս անց նախարարը ստիպված էր հրաժարական տալ: Լիտվայի բարձրաստիճան պաշտոնյաների էթիկայի հանձնաժողովը, ուսումնասիրելով մեր հետաքննության նյութերը, ընդունեց, որ պետական և մասնավոր շահերի բախում է տեղի ունեցել և նախարարը, որոշումներ կայացնելով ի նպաստ այն ընկերության, որի համասեփականատերն իր մայրն է՝ չարաշահել է լիազորությունները: Ավելի ուշ նախարարը դատական գործեր հարուցեց, սակայն պարտվեց:

Լիտվան ժողովրդավարական երկիր է, և մարդկանց մեծ մասի համար իրավունքի գերակայությունը կարևոր սկզբունք է: Լիտվայի անկախության առաջին տարիներին լրագրողների նկատմամբ բռնությունների մի շարք դեպքեր են արձանագրվել: Օրինակ՝ 1993 թվականին սպանվեց լրագրող Վիտաս Լինգիսը: Նա հիմնականում մաֆիայի անդամների հանցավոր գործունեության մասին հետաքննական նյութեր էր պատրաստում: Դատարանը վճռեց, որ Վ. Լինգիսը սպանվել է իր լրագրողական գործունեության համար, իսկ սպանությունը կատարած հանցագործը դատապարտվեց մահապատժի: Գործում ներգրավված այլ մարդիկ նույնպես շատ խիստ պատիժներ ստացան: Սա վերջին դեպքն էր, երբ Լիտվայում մասնագիտական գործունեության համար լրագրող էր սպանվում: Այս գործով վճիռը վերացրեց լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու որևէ ցանկություն: Այդուհանդերձ, լրագրողների դեմ դեռևս կիրառվում են այլ բնույթի ճնշումներ:

Հերքում

Սա բազմաթիվ բացասական հրապարակումներին հաջորդող առաջին արձագանքն է: Եթե նրանք չեն կարողանում սխալներ գտնել հետաքննության փաստերում, ապա հերքում են դրանք: Հատկանշական է, որ հաճախ հերքվում են այնպիսի մանրամասներ և հանգամանքներ, որոնք հետաքննական նյութում ընդգրկված չեն: Դրանով նրանք փորձում են վարկաբեկել պատմությունը, լրագրողին, հրատարակչին: Նպատակը հետաքննական նյութից ուշադրությունը հետաքննությունը կատարած անձանց վրա շեղելն է:

Վերը նշված դեպքում նախարարությունը փորձում էր հերքել, որ նախարարը ազդեցություն է ունեցել նախարարության որոշումների վրա (այո, սա անհեթեթ է հնչում): Մինչդեռ հետաքննությունը պարզել և հաստատել էր, որ նախարարը բավական շահավետ պայմանագիր էր ստորագրել այն ընկերության հետ, որի համասեփականատերն իր մայրն էր: Հոդվածում չէր նշվել, թե նախարարն օգտագործել է իր ազդեցությունն ինչ-որ նպատակի հասնելու համար:

Եթե հերքման մարտավարությունն արդյունք է տալիս, ապա հրատարակիչը և լրագրողները թիրախ են դառնում և ստիպված են ներողություն խնդրել:

Երբ հիշյալ պատմությունը տպագրվել էր, իմ լավ ընկերներից մեկը զանգահարեց և հարցրեց. «Ո՞վ է վճարել հետաքննության համար: Ո՞ւմ համար եք աշխատում: Ճիշտ չէ, որ նախարարը կոռումպացված է և յուրացրել է այդ գումարը»: Ես նրան քաղաքավարի խնդրեցի գնել թերթը, կարդալ հոդվածը և համեմատել թերթում գրվածը և այն, ինչը նախարարությունը փորձում է հերքել: Ի վերջո, ընկերս ստիպված էր ընդունել, որ հետաքննությունն իրականացվել էր լրագրության մասնագիտական չափանիշներին համապատասխան, իսկ նախարարությունը հերքում էր այն, ինչ հոդվածում գրված չէր:

Վարկաբեկում

Եթե հերքման մարտավարությունը չի աշխատում, հակառակորդները փորձում են վարկաբեկել հետաքննության հեղինակին ու հրատարակչին: Օրինակ՝ իմ ականջին լուրեր էին հասնում, թե իբր հետաքննության հեղինակ Սարունաս Չերնյաուսկասն աշխատել է որոշ գործարարների օգտին, որոնք գոհ չէին նախարարի վարած քաղաքականությունից: Մեր հակառակորդների համար հեշտ էր այս ձևով վարկաբեկել մեր լրատվական ընկերությանը, քանի որ պատմությունը տպագրելուց ոչ շատ առաջ մեր լրատվամիջոցը գնել էր ոչ այնքան լավ համբավ ունեցող մի գործարար: Ուստի, հակառակորդներն օգտագործել էին այս թույլ կողմը և մեծ վնաս հասցրել մեր ընկերության հեղինակությանը: Սակայն, ամենայն անկեղծությամբ պիտի ասեմ, որ միայն ես և Ս. Չերնյաուսկասը գիտեինք մեր հետաքննության մասին, որևէ այլ անձ դրանում ներգրավված չի եղել: Միայն մեր հետաքննությանը հաջորդած արտաքին ճնշումից հետո լրատվամիջոցի հիշյալ սեփականատերը սկսեց միջամտել բովանդակությանը, և որոշ հետաքննություններ չեղարկվեցին:

Կեղծ իրադարձություններ

Կեղծ, ուշադրությունը շեղող իրադարձությունների մարտավարությունն այնքան հայտնի է, որ նույնիսկ Հոլիվուդն է այն ներառել իր ֆիլմերում: Հավանաբար շատերը դիտել են Wag the Dog («Խաբեություն») ֆիլմը կամ House of Cards («Խաղաքարտերից տնակ») հեռուստասերիալը: Օրինակ՝ House of Cards-ի վերջին դրվագում Ֆրենք Անդերվուդը «համընդհանուր պատերազմ» է հայտարարում՝ ի պատասխան իր կոռումպացվածության վերաբերյալ լրագրողի կատարած հետաքննության: Նման մարտավարության հիմնական նպատակն է ուշադրությունը շեղել իրական պատմությունից: Կրկին հիշենք նախարարի պատմությունը: Իր պաշտոնաթողությունից մի քանի շաբաթ առաջ նա հրապարակեց «շատ կարևոր և ցնցող» փաստաթուղթ, որում պնդում էր, որ կոռումպացված քաղաքական և գործարար խմբերը փորձում էին հարկադրական ճնշում գործադրել իր և կառավարության այլ պաշտոնյաների վրա: Սակայն այս աղմկալի պատմությունը զարգացում չստացավ և ընդամենը մի քանի օրով շեղեց ուշադրությունն ընտանեկան բիզնեսի հետ նրա ունեցած կապի մասին հիմնական խնդրից:

Իրավական գործողություններ

Թույլ տվեք ենթադրել, որ գրեթե յուրաքանչյուր լրագրող իր աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն մեկ անգամ լսել է, որ իր դեմ դատական գործ կհարուցեն, եթե պատմությունը հրապարակվի: Որոշ մարդիկ կատարում են խոստումը, նույնիսկ եթե գիտեն, որ դատը չեն շահելու:

Այսպիսի գործողություններ ձեռնարկելով՝ նրանք նախ՝ ցանկանում են հասարակությանը ցույց տալ, որ իրենք ճիշտ են, իսկ լրագրողը՝ սխալ: Երկրորդը՝ հոգեբանական ճնշում են գործադրում լրագրողի և ողջ լրատվամիջոցի վրա: Ոչ ոք չի ցանկանում հայտնվել դատարանում և ժամանակ կորցնել դատական գործերի վրա: Եվ վերջապես, ոչ բոլոր լրատվամիջոցները, հատկապես մեր օրերում, լավ փաստաբաններ վարձելու բավարար ֆինանսական միջոցներ ունեն:

Լրատվամիջոցին հասցրած վնասի լավագույն օրինակն է Թերի Ջին Բոլեան ընդդեմ Gawker լրատվակայքի գործը: Կարևոր է նշել, որ իրավական գործընթացը լրագրողական հետաքննության արդյունքում չէր նախաձեռնվել, այնուամենայնիվ, Gawker-ի նկատմամբ գործողություններն աղետալի հետևանքներ ունեցան լրատվամիջոցի և աշխատակիցների համար: Նրանք ստիպված եղան իրենց սնանկ հայտարարել: Մեկ այլ

օրինակ է Դոնալդ Թրամփը, որն իր ընտրարշավի ընթացքում շուրջ 20 անգամ սպառնացել է դատի տալ լրատվամիջոցներին, այդ թվում՝ The New York Times-ին և The Washington Post-ին:

Լիտվայի էկոնոմիկայի նախարարը նույնպես գործ հարուցեց մեր լրատվամիջոցի դեմ, սակայն՝ պարտվեց:

Ինչպես խուսափել բացասական հետևանքներից

Ցանկացած հետաքննական պատմության դեպքում ձեր հակառակորդները, ամենայն հավանականությամբ, կկիրառեն նշված չորս մարտավարություններից առնվազն մեկը՝ հետաքննությունը վարկաբեկելու նպատակով: Եթե նրանք պրոֆեսիոնալներ են, ինչպես իմ օրինակում, նրանք կկիրառեն բոլոր այս մեթոդները համակցված: Կարծում եմ՝ սա անխուսափելի է: Սակայն ձեր նկատմամբ հարձակումների հետևանքները կարող եք մեղմել՝ կիրառելով հետևյալ խորհուրդները:

Առաջին՝ հետաքննություն իրականացնելիս եղեք որքան կարելի է ճշգրիտ: Ամեն ինչ ստուգեք բազմաթիվ անգամ: Սխալներ թույլ մի տվեք, քանի որ չնչին սխալը կարող է ճակատագրական լինել հետաքննության արդյունքների, ձեր և լրատվամիջոցի համար:

Երկրորդ՝ գործեք հնարավորինս հրապարակայնորեն: Փաստաթղթերը և այլ ապացույցները առցանց վերբեռնեք սոցիալական ցանցերում և համագործակցեք այլ լրատվամիջոցների հետ: Օրինակ՝ Ս. Չերնյաուսկասը բաց նամակ էր գրել նախարարին և բացատրություններ պահանջել հետաքննության վերաբերյալ: Նամակը հրապարակվել էր մեկ այլ լրատվամիջոցում: Մի՛ խուսափեք տվյալ թեմայի շուրջ քննարկումներից և խոսակցություններից: Հրապարակայնությունը ձեր ամենամեծ զենքն է, մինչդեռ հակառակորդի նպատակն է լռեցնել ձեզ կամ փոխել պատմությունը:

Երրորդ՝ հավատարիմ թիմ ունեցեք, որը կարող է օգնել ձեզ նաև հետաքննությունից հետո՝ տրամադրելով ավելի շատ տեղեկություններ հետաքննության վերաբերյալ և, ամենակարևորը՝ բարոյապես աջակցելով ձեզ: Եվ, այո, լավ փաստաբանը պարտադիր է:

Նշումների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 6 տպ. մամուլ:

«Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում:
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

«Բացահայտումների հետագծով» ձեռնարկը մեկտեղել է «Թվապատում հետաքննություն. մեդիան ընդդեմ կոռուպցիայի» կոնֆերանսին բանախոսների ներկայացրած բազմազան թեմաները՝ լրագրողական ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելու համար:

Ձեռնարկում տեղ գտած 12 հոդվածների հեղինակները տարբեր երկրներից են՝ Լիտվա, Չեխիա, Ուկրաինա, Մոլդովա, Թուրքիա, Վրաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա:

Նրանք գրում են թե՛ իրենց մասնագիտական փորձի, լրագրողական բացահայտումների, թե՛ իրենց երկրում առկա իրավիճակի, կոռուպցիայի դեմ պայքարում միջսահմանային համագործակցության կարևորության ու ազդեցության մասին:

Հեղինակները ներկայացնում են հետաքննական լրագրության ժամանակակից միտումները, հարթակներն ու գործիքները, խոսում հնարավորությունների ու խոչընդոտների, արգելքների ու ճնշումների մասին: